Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

891.99
P-94

16 NOV 2011

Հրատարակութիւն ԽԱՉԱՏՈՒՐ ՕՀԱՆԵՍՅԱՆԻ

891.99
Թ-94
1758 2700
№

ՈՒՍԱՆՈՂՈՒՀԻ

ՆԵՐԿԱՅ ԿԵԱՆՔԻՑ

Աշխատասիրեց

ՊՕՂՈՍ ՂԱԶԱՐԵԱՆ ԹՈՒՄԸՑԵԱՆՑԸ

16259

ԲԱԳՈՒ
Տպարան Եղբ. Ղազարեանների
1904.

19 APR 2013
31924
2416

Дозволено Цензурою,
Тифлисъ, 30 декабря 1903 г.

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀՍՍՀ-ՍՍՌ.
(2783/41)
1763.200

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ.

«Ուսանողուհի» վերնագրով փոքրիկ գիրքը, լոյս տեսնելով իմ յարգելի ընթերցողը կը կարդայ անշուշտ ու ճիշտ-մարդապէս կը հաստատէ, թէ ինչպիսի դերեր են կատարում, հարազատ ու բարոյապէս ուսումնասիրած մայրերը, դէպի իւրեանց փափկասուն և մատաղ ժառանգները։ Ինչպէս, որ Եւան մեղանչեց Աստուծոյ առաջ և պատճառ դառաւ ընդհանուր աշխարհի մեղքերին իւր մայրութեան շնորհիւ, նմանապէս և ներկայ մայրերը կը մեղանչեն, իւրեանց զաւակաց դէմ, եթէ մայրը կը թողնէ իւր որդկերանց անուշադրութեան տակ։ Մայրն է, զաւակաց բախտաւոր ապագան։

Հեղինակ։

ԻՐ ԲԱԶՄԱԵՐԱԽՏ

ՀԱՆԳՈՒՅԵԱԼ ՄՕՐԸ

ՄԱՆՈՒՉԱԿ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ

ԹՈՒՄԱՅԵԱՆՑԻ

ԱՆՄՕՌԱՆԱԼԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

ՆՈՒԻՐՈՒՄ Է

Հեղինակը։

ՈՒՍԱՆՈՂՈՒՀԻ

Արևը փոքր ինչ բարձրացել էր երկնակամարի վերայ։ Գիշերուայ մեռելային լռութիւնից աղատուել էր բնութիւնը։ Նա նորից կենդանացել էր, նորից ոյժ էր ստացել, նոր հոգի առել ու ոտքի կանգնել։ Ամեն տեղ շարժուում էին, ամեն կողմից լսւում էին ձայներ։ Մարդիկ արթնացել էին գիշերուայ խոր քնից, և վրազ վրազ շտապում էին իւրեանց գործերին։ Օրը բաւականի սքանչելի էր։ Քաղաքի լայն մայթերի վրայով անց ու դարձ անողները, անհաշիւ ու անհամար էին։ Փողոցներում երևում էին ուսանող աշակերտներ և աշակերտուհիներ, որոնք իւրենց դասագիրքերով գնում էին դպրոց դէպի ուսումնարան, որտեղ սպասում է աշխատասեր ուսանողին սովորեցնել խելք գիտութիւն, ջանասիրութիւն, առաքինու-

թիւն և վարք ու համեստութիւն։ Ուսանողներից, որը այդ օրը քաջ պէտք էր պատասխանէր իւր ուսուցիչներին, կամ սովորել էր վարժ դասերը, գնում էր նա արագ քայլերով գլուխը բարձր բռնած ինչպես մի հսկայ, կամ ինչպէս աշխատասեր մօտենալով իւր սուրբ աշխատանքին։ Իսկ այն ուսանողը, որը դասերը չէր պատրաստել քայլում էր տխուր, գլխակոր և զանազան մտքերի մէջ ընկղմուած, երեւակայելով ուսուցիչների նախատինքները թոյլ թուանշանների հետ, որոնք այդ օրը պէտք էին ստանային։ Ահա, այդպէս գնում էին աշխատասէրները և ծոյլերը իւրեանց աշխատանները։

Քաղաքի բարձրի կողմից գնում էր մի աշակերտուհի դեպի ուսումնարան։ Նա իւր գլուխը գետնին էր խոնարհել և դասագրքերով երեսի կէսը ծածկել։ Անկասկած կարելի էր գուշակել թէ այդ ուսանողուհին դասերը չէր սովորել, կամ թէ մի տանջեցնող ցաւի վերայ էր մտածում։ Գնում էր առաջ, բայց նորա քայլերը ստէպ առ ստէպ դանդաղանում էին և գլուխը աւելի ու աւելի կորվում դէպի գետինը։

Թշուառ օրիորդը, իւր մտքում ընկղմուած սկսեց խօսալ ինքը իրեն, մի խոր հոգոց հանելով սրտի խորքերից։

—Աստուած իմ, մինչև երբ, ես պէտք է ուսումնարանում ամօթով մնամ, մինչև երբ ես իմ դասերս չ'պատրաստած ուսումնարան պէտք է գնամ ու ամենայն օր դասերիցս թոյլ թուանշաններ ստանամ։ Ամբողջ օրերով նստած պատրաստում եմ դպրոցական պատուերները բայց այնուամենայնիւ ոչինչ չունիմ սովորած։ Ի՞նչ է դորա պատճառը արդեօք։ Ի՞նչու ես պէտք է դասերս վաղարօք պատրաստեմ, իսկ նախնթաց օրը ոչինչ չ'կարողանամ պատասխանել իմ ուսուցիչներին, և ես մնամ նրանց առաջը ամօթով։ Այդ ես չեմ հասկանում։ Երեւում է, որ գլխաւորապէս թուլութիւն-

ներս, խելքիս ու մտքիս խանգարմունքն են պատճառը։ Այո, ես այդ դեռ նոր եմ հասկանում, որ ինձ ծոյլ աշակերտուհի դարձնողը իմ սեփական անուշադրութիւններ։ Որովհետև, երբ վերցնում եմ դաս պատրաստելու, գրքիս տառերի փոխարէնը նորա գրաւիչ աչքերն են երևում, առնում եմ, որ գրեմ ինձ պատուիրուած գրութիւններս, նրա հրեշտակային պատկերն է ներկայանում իմ առաջ. և այդպիսով կորցնում եմ բոլոր ուշադրութիւններս։ Խլում է ինձնից, այդ գրաւիչ պատկերը իմ վերջին ոյժերը, և ես մնում եմ առանց կամքի և դրանով թուլանում եմ ամէն գործի դէմ։ Աստուած իմ, չափազանց դժուար է այն ուսանողի համար, որը սիրահարուած է։ Նա մնումէ մոլորուած, շուարուած և մինչև անգամ խելագարի նման ցնորուած Ինչպէս ահա և ես։ Իմ այրի մայրս ստիպում է ինձ ուսումնարան գնալ. բայց նա չիհասկանում, որ այսուհետև ես

ուսումնարանից ոչինչ օգուտներ չունիմ բացի վնասներից։ Ի հարկէ, իմ մայրս ցանկանում է, որ ես կրթուելով ուսմագետ՝ աղջիկ դառնամ, բայց այն խեղճ կինը չ՚գիտէ թէ, ոչ ուսում, ոչ ապագայ և ոչ ծնողական պատիւներ չեն հասկանում սիրահարուած ուսանողները։ Նորանք բաւականի հարմարութիւններ ունին իւրեանց ուզածները կատարելու։ Անկասկած, որ միշտ կարող են տեսնուիլ, իրարուհետ խօսալ ու աւելի ու աւելի սէրը վառելով ու ամրացնել իւրեանց մէջ։ Օրինակ ես վերցնում եմ գիրքերս գնում եմ ուսումնարան պարապելու, երբ երբեմնապես պատահում է նա ինձ, մենք հարմարութեանը նայած քաշվում ենք մի հարմար ծածուկ տեղ ու սկսում ենք քաղցր խօսակցութիւններ այնքան երկար, որ կարող եմ ասել թէ, մի քանի ժամեր են տևում։ Սակայն, դարձեալ ես չեմ բաւականանում, այլ ցանկանում եմ խօսալ, և նո-

բա գրաւիչ դէմքին նայել, շարունակ առանց մի բոպէ կորցնելու։ Այդպիսի դէպքերում մօռանում եմ ուսում, ուսումնարան և բոլոր դպրոցական պատուերներ։ Պատահում են այս օրեր, որ բնաւին ուսումնարանի կողմովն չեմ անցնում և ուսուցիչներիս դէմքն անգամ չեմ տեսնում, բայց գալիս եմ տուն իմ սովորական ժամանակին, որ մայրս ոչինչ չ'կասկածէ։ Ահա թէ որքան հարմարութիւններ ունի սիրահարուած ուսանողը։

Մտածում էր ուսանողուհին և շարունակում էր իւր ճանապարհ դանդաղ քայլերով։ Ուսումնարանը, գտնւում էր քաղաքական այգու բարձրի կողմում իսկ ստորին դռան դէմ գտնվումէր Կ. Ծովը։ Ծովը այդ օրը բաւականի խաղաղ էր. արևի խնամող ճառագայթները պսպղեցնում էին Ծովի պարզ մակերևոյթը, և մի քաղցր առաքինութիւն էին ձգում աշխատող մարդկանց սիրտերը։ Նոքենաւները և մակոյկները հանգիստ

ու անշարժ կանգնած էին Ծովի երեսին։ Կարծես թէ ամեն իրանց նայողին ասում էին համբական եղանակով. Ո՛վ, աշխատաւորներ աշխատեցէք ջանասիրութեամբ. Աստուած ձեզ համար է ստեղծել այդ բոլոր հրաշալի հարմարութիւնները, օգտուեցէք ժամանակից քանի, որ ոյժ ունիք։ Այդ անշունչ առարկաները իրանց համբական արտայայտութիւններով, կարծես թէ վրազեցնում էին ուսանողներին ու մի տեսակ ոգևորութեամբ խրախուսում էին. շտապեցէք ով աշխատասէր ուսանողներ և ուսանողուհիներ, ժամանակն է դպրոցի աշխատեցէք լաւ սովորելու, որ քննութեան ժամանակ ամօթով չըմնաք։

Ծովի դէմ լայն փողոցում, ուր վազվազում էին անթիւ կառքեր յետ ու առաջ, իրանց խլաձայն անիւներով տալիս էին քաղաքին բարձրագոյն հպարտութիւն։ Այդ միջոցին առաջ էր վազում դէպի քաղաքական այգին, մի շքեղ

կառք, որի մէջ նստած էր մի սիրուն երիտասարդ. նորա աչքերը ու յոնքերը այնքան սև ու գեղեցկութեամբ էին կարգուած, որ տեսնողը բոլորովին զմայլուէր: Նորա նորաբոյս, սև ու բարակ բեխերը, գեղեցիկ, փոքրիկ սրածայր սև միրուքը, սպիտակ ու կարմրագոյն երեսը, այնքան գրաւիչ էին, որ կատարեալ հրեշտակի նմանութիւն էին տալիս:

—Նադեա՛ գոչեց երիտասարդը կառքից վեր ցատկելով. ի՞նչու այսօր տխուր ես առաջ գնում հոգիս, շարունակեց առաջինը բռնելով երկրորդի ձեռքը:

—Ախ, այդ դու ես, Յովհաննէս, ո՞ւր այդպէս վաղ, կամ ինչ շտապեցնող գործ է քեզ սպասում, որ կառքով ես առաջ գնում, պատասխանեց Նադիան գլուխը այս ու այն կողմը շրջելով, կարծես թէ երգնչում էր, թէ մի գուցէ տեսնող կըլինի այդ երիտասարդի հետ խօսելիս:

—Ես, հէնց խսկապէս քեզ էի կամենում գտնել, դրա պատճառով կառք էի վարձել, պատասխանեց երիտասարդը քմքծիծաղ տալով բաց թողեց օրիորդի ձեռքը:

—Ի՞նչ կայ որ, պատասխանեց Նադիան վախենալով:

—Ես, կամենում էի, որ դու այսօր ինձ հետ միասին կառքով գնաինք փոքր ինչ զբոսնելու. ասում են, որ մի հրաշալի նաւթի շադրուան է բացուած: Ինչպէս պատմում են, շատ զարմանալի ու հետաքրքիր տեսարան է:

—Ոչ, ես ուսումնարան պէտք է գընամ, պատասխանեց Նադիան փոքր ինչ հանգստանալով:

—Մի՞թէ կըմերժէիր ինձ, սիրելիս:

—Ոչ, ես մերժելու ոչինչ չունիմ:

—Եթէ, չես կամենում ինձ մերժել, ուրեմն նստիր ինձ հետ միասին կառք: Այս խօսքերը լսելով Նադիեան պարտաւորուած դարձեալ, սկսեց այս ու

այն կողմը խլըշկոտալ։ Երբ նա միամիտացաւ, որ իրան ուրիշ ծանօթ, նկատողներ չ'կան խկոյն ցատկեց կառքի մէջ։ Նորեկ երիտասարդը ևս հետևեց Նորա օրինակին ու կառքը սլացաւ։ Յովհաննէսը առնելով Նադիալից դասագրքերը, փաթաթեց իւր ձեռի լրագրի մէջ, որ ոչ ոք, չէր կասկածիլ, թէ այն թուղթի մէջ փաթաթածը գիրքեր են։

— Ո՞ւր ենք գնում մենք սիրելի Յովհաննէս, հարցրեց Նադիեան շահասիրտուելով կառքի մէջ։

— Զբոսնելու, և նաւթի շաքրվանին նայելու։

— Գիտես, սիրելի Յովհաննէս, ես, վախենում եմ, որ մի գուցէ այնտեղ ինձ ծանօթ լինի, տեսնէ ինձ քեզ հետ, յետոյ մօրս պատմէ. գիտես մայրս այն ժամանակ ինչ կերպերով կըպատժէ ինձ։

— Ինչ, ոչինչ էլ չի կարող անել։

— Ո՛չ, ո՛չ, նա չափից դուրս խիստ կին է, երբ լսէ թէ ես այսօր կամ ուրիշ ժամանակներ քեզ հետ խօսում եմ կամ զբոսնում եմ ոչ այն ժամանակ Աստուած թող միմիայն, ինձ ազատէ նորա ձեռից...

— Մի՞թէ այդքան խիստ է վարուում։

— Խիստ, այն էլ անչափ խիստ, հաւատացիր, որ եթէ նա լսէ իմ ձեռներս ու ոտներս պինդ ամուր կըկապոտէ երեք օրից վեր սոված կըպահէ միշտ անխիղճ ծեծելով, էլ չի թողնիլ, որ տնից դուրս գամ փողոց, կ'արգելէ մինչև անգամ ինձ ուսումնարան գնալ։ Այն ժամանակ էլ չեմ կարող քեզ տեսնել և չէի կարող խօսալ քեզ հետ արձակ։ Աստուած իմ ինչ կըլինէր այն ժամանակ իմ դրուխիւնը, պատասխանեց օրիորդը վերջին խօսքերը վշտալի եղանակով։

— Ոչինչ մի կասկածիր, մենք կառքի մէջ ծածկուած կըլինենք և ոչ ոք քեզ չի կարող ճանաչել, ասաց Յովհաննէսը։

— Իսկ մենք երկար պէտքէ զբոս-

Первая Советская Библиотека

Հայ. Հանրային գրադարան

նենք։

—Մինչև ճաշ կամ աւել։

—Ո՜հ, ուրեմն այսօր ես ուսումնարան չպէտք է գնամ։

—Ասա՛, ինձ ճշմարիտը սիրելի Նադեա՛ որնես աւելի շատ սիրում, ինձ թէ ուսումը։

—Իհարկէ քեզ ինչէ ուսումը, ինչ է ծնողը, ինչ է քոյը կամ եղբայրը քո սէրի դէմ, այդ բոլորը ես չեմ փոխիլ քո կեանքի մի լժելի հետ։

—Ախ եթէ ասածներդ բոլորը ճիշտ լինէին, ես ինձ ամենաբախտաւորը կը համարէի աշխարհում։

—Հաւատացիր սիրելի Յովհաննէս, որ ես քեզ սիրում եմ, այն և մի այնպիսի կրակոտ սիրով, որ լեզուովս պատմելու ընդունակութիւն չունիմ։ Միթէ դու չգիտես, որ քեզ սիրում եմ, միթէ դու չես զգում, միթէ քեզ յայտնի չէ որ իմ բոլոր կեանքի ուրախութիւնը, իմ ամէն մի քաղցր ապագաները,

իմ ուսումը, իմ անվերջ բախտաւորութիւնը, միայն դու ես։ մի խօսքով ինձ կենդանութիւն նուիրողը ու գերեզման տանողը միմիայն քո անխաւար սէրն է։

—Հաւատում եմ, որ ինձ սիրում ես սիրելի Նադեա, բայց...

—Ինչ բայց, ասիր խնդրեմ, քո խօսակցութիւնից մի ուրիշ միտք է երեւում, ասիր 'ի սէրն Աստուծոյ ինձ մի տանջիլ։

Ես քեզ երբէք չեմ տանջում, այլ քեզ տանջողին վրէժխնդիր թշնամի եմ։

—Ասիր, ասիր, ինձ սիրելի Յովհաննէս, ինչ բայց էր։ ասիր խնդրում եմ քո սրտի բոլոր խորհուրդները։

—Ես ոչ մի ծածուկ խորհուրդներ չունիմ հոգիս, բայց լսեցի մի քանի օր առաջ թէ քո գաղտնի նամակները գտնւում է մի ուրիշ երիտասարդի մօտ։

—Ո՜հ Աստուած այս ինչ եմ լսում, իմ գաղտնի նամակները գտնւում է մի ուրիշ երիտասարդի մօտ։ իմ թանգագին

Յովհաննէս, իմ աչքի լոյս, չ՚հաւատաք այդ խօսքերին դրանք բոլորը թշնամու բառեր են։ Ա՛խ Տէր իմ, շարունակեց Նադեան հանելով թաշկինակը գրպանից և սկսեց սրբել աչքի արտասուքները որից մի քանի կաթիլ գլորուելով ընկան գիրքը։ Միթէ քո սէրը այդչափ կասկածաւոր է, միթէ դու ինձ թերի ես սիրում. ոհ ես այդ դեռ նոր եմ հասկանում, որ մինչև այսօր քո ամեն մի խօսքերը կեղծ են եղել, ասաց ու թաշկինակով ծածկեց երեսը, և սկսեց խուլ ձայնով հեկեկալ։

—Հաւատում եմ, իմ աչքի լոյս, որ այդ բոլորը, թշնամական բառեր են։ Սիրում եմ քեզ անկեղծ և պէտքէ սիրեմ մինչև գերեզման մտնելս։ Դու ոչ մի կարծիքներ մի ունենալ կրկնում եմ, որ քեզ սիրում եմ քեզնից բացի աշխարհում ոչ մի բանով ես երջանիկ չեմ դու ես միայն իմ երջանկութիւնս։ Մի լալ և մի հեկեկալ իմ հրեշտակ դու

դրանով ինձ սարսափելի կերպով վիրաւորում ես ասաց Յովհաննէսը բռնելով իր խօսակցի կռնից, որ հեռացնէ նորա ձեռները երեսից։

—Թող ինձ հանգիստ՝ի սէրն Աստուծոյ, կամակորվելով Յովհաննէսի վարմունքին ասաց Նադեան։

—Բաւական է Նադեա, թող քո լացը մենք այժմս կառքի մէջ ենք գրտնուում, թող այդ հեկեկանքդ, ես կատակ եմ արել ճշմարիտ խոստովանուում եմ որ կատակ էր իմ ասածներս բաւականացիր, հոգիս, ինձ մի տխրեցնիլ։

Նադեան սկսեց հետզհետէ թուլացնել իւր հեկեկանքները, երբ նա թաշկինակը վերցրեց երեսից սրբեց կարմրած աչքերը, այն ժամանակ նորա ականջներին լսուեցին մի անսովոր գոռոց։ Նա զարմացած սկսեց այս ու այն կողմը նայել բայց ոչինչ չտեսաւ և ոչինչ չէր կարողանում հասկանալ թէ արդեօք ինչ գոռոց է կամ որտեղիցն է լսվում այդ

անծանօթ ձայնը։

—Լսում ես սիրելիս այդ գոռոցը։ դա հէնց այն գոռոցնէ որին մենք նայելու ենք գնում, որին գոչում են նաւթի շաղրուան։ Նա այն ոյժով դուրս է փչում գետնի տակից նաւթը, և լցնում ահագին հողից փորած շտեմարանները։ խօսաց Յովհաննէսը խանգարելով օրիորդի ապշութիւնը։

—Ուրէ ապա ինչու չի երևում պատասխանեց Նագեան կօշիկներին նայելով։

—Ահա շուտով կերևայ։

Մի քանի վայրկեան, այդ խօսակցութիւնից յետոյ մեզ ծանօթ կառքը արդէն կանգնած էր ծովի ափից քիչ հեռու, որտեղից նայում էին Յովհաննէսը ու Նագեան նաւթի շատրուանին, որը իրանցից այնքան մօտ չէր։ Նայում էր Նագեան թէ ինչպէս վիշկի չորս կողմից թափւում է նաւթը և դառնում է գետակ վազում դէպի մեծ նաւթի շտեմարանները։ Այդ սև ու կանաչա-

գոյն հեղուկը բոլորովին զմայլեցնում էին Նագեային։ Թափւում է վիշկից երեւակայում էր նա, դեղնափոշիանման մի տեսակ հեղուկ իսկ գետնին ստանում է սև ու կանաչ գոյն։ կամ նորա ուժեղ հոտը այնքան ազդու է որ մարդու ուղեղն է ծակում։ Զարմանում էր Նագեան այդ բոլոր հրաշքներից ու ապշած նայում և հիանում։

Բ.

Մութը վրայ էր հասել։ Գիշերուայ թանձր խաւարը պատել էր աշխարհին և թագաւորել բոլոր երկիրը։ Ամեն մարդ քաշվել էր իր բնակարանը։ Փողոցները և մայթերը էլ ցերեկուայ պէս կենդանի չէր իւր անցուդարձ անողներով։ Նրանք ևս լռել էին և կարծես թէ ննջում ու հանգստանում էին ցերեկուայ սաստիկ աշխատանքից, որ նոր ոյժ ստանան նորից ամրանան միւս օրուայ համար որ կարողանայ դիմանալ ամբոխի ոտների

տակ։ Քաղաքում ամեն ինչ լուռ էր։ Մարդկանց մեծամասնութիւնը նստում էր իւրեանց փափուկ անկողիններին մէջ։ Կային ևս արթուն հոգիներ, որոնք մի կիսատ գործով զբաղուած աշխատում էին վերջացնել. որոնք էլ ժողովարաններում խառնուած թղթախաղերով մօռացել էին քուն, հանգստութիւն, տուն, ամուսին և այլը։

Քաղաքի Շ. թաղում մի տան մէջ կար և մի հոգի արթուն նստած. նա դեռ ևս չէր հանգստացել։ Նստած էր պարզ ու պայծառ ճրագի առաջ սեղանի մօտ. նրա դէմը թափուած էին գրքեր ու տետրակներ։ Կռնած էր նա սեղանի վերայ, աշխատում էր սովորել մի ոտանաւոր ըերանացի, բայց այդ խեղճ հոգին չէր կարողանում ըմբռնել իւր մտքի մէջ։ Երկար բացուխուփանելուց յետոյ գիրքը, մի խոր հոգոց հանեց իւր սրտի խորքերից. փակեց իրան չարչարող առարկան և սկսեց լուռ ու մունջ մտածել։ Սենեակում ամեն բան լռութեան մէջ էր։ Միայն կից սենեակիցն էր լսւում խուլ շնչառութեան ձայներ, ուր լսողը անշուշտ կասեր, թէ այնտեղ որտեղից լսւում էին այդ շնչառութիւնները, անկասկած երեք անձինք կային քնած։

Ուսանողուհի էր այն սեղանի մօտ նստածը. որը երկար ժամերով աշխատում էր պատրաստել իւր դասերը։ Բայց այն խեղճ արարածը, իզուր չարչարւում էր, իզուր կռւում էր, իւր դասագիրքերի հետ, որովհետև ոչինչ չէր կարողանում ըմբռնել դասերից։ Յիշեալ ուսանողուհին յաղթվելով իւր դասագիրքերից բաւականի ձանձրացաւ իւր վիճակի վերայ, սակայն ծածկեց նրանց և մի քանի րոպէ լուռ նստելուց, առաւ մի թուղթի կտոր, վերցրեց սեղանի վերայից գրիչը ու սկսեց գրուվթեամբ ըզբաղուիլ։ Թուղթի և գրուվթեան ձևը նամակի էր նմանւում։ Կուռը դէմ տուած սեղանի երեսին, ափով պահած

անքնութիւրից ծանրացած գլուխը, լուռ առանց ձայնի սկսեց գրել։

Նորա հրապուրիչ և բոցավառ սև ու կոլոր աչքերը, սև կամարաձև ու շքեղ յօնքերը, սպիտակ ձիւնանման փափուկ բամբակի պէս կարմիր վարդից առաւել թշերը, փոքրիկ ու սիրուն քիթը, մարջանանման կարմիր ու բարակ շրթունքները, կոլոլ ու գեղեցիկ ծնօտը, երկար ու քնքոյշ սև մազերը, կարապային բարձր պարանոցը, դուրս ընկած ոչ շատ մեծ կուրծքը, բարակ և նազուք մէջքը հրաշալի նոճի հասակը. մի խօսքով մարդուն խելագարացնող այդ չ'Աստուածուհի էակը, նոյն գիշերը բոլորովին կերպարանափոխուել էր։

Մերթ նրա սքանչելի արտայայտութիւնը ոգեորուում էր սպիտակ թուխթի վերայ շարելով սև տառերը, մերթ բոլորովին թառամում և կարծես թէ քնի ուժեղ զօրութիւնը ազդում էր այն խեղճ օրիորդին։ Այդպիսով գրեց թուղ-

թի մի ամբողջ երեսը, երբ կամենում էր շրջել միւս երեսի վերայ, յանկարծ նրա քնքոյշ մատները թուլացան, էլ չկարողացան կրկին բռնել գրիչը։ Հեռացրեց փոքր ինչ թուղթը իրանից և սկսեց խոր մտածմունքի մէջ ընկղմուել։

—Ա՛խ Աստուած, որքան վատ բոպէներ են ինձ սպասում։ Ենթադրենք թէ իմ նամակը արդէն պատրաստ է, բայց ո՞վ պէտք է տայ նորան, կամ ի՞նչ միջոցներով կարող եմ հասցնել նորան այս նամակը, ո՛հ այս ցաւը, բոլորովին անտանելի է։ Այս էր մտածում ուսանողուհին, որի պատճառով խանգարուեցաւ նորա հետաքրքիր գրութիւնը։ Մի քանի բոպէներից յետոյ նա դարձեալ քաշեց առաջ նամակի թուղթը, ձախ ձեռը վերցնելով սեղանի վրայից ու դարձեալ սկսեց գրել քիչ ուրախ աչքերով։ Կարծես թէ նա գտաւ մի միջոց, մի յարմարութիւն իւր նպատակին հասնելու համար։ Այս անգամ նորա գրիչը աւելի ոգևոր էին

շարժւում, որպէսզի որքան կարելի է շուտ աւարտեր իւր կիսատ գործը։ Անցնում էր գիշերը բայց մեզ ծանօթ օրիորդը դեռ նստած էր սեղանի մօտ։ Նա դեռ ևս չէր քնել, նա դեռ չէր հանգստացել կարելի էր ասել, որ ցանկանում էր այդ գիշերը վերջ տար իւր բոլոր տանջանքներին։ Վերջ տար իւրեան հալ ու մաշ անող տառապանքներին, ջնջեր ու անյայտացներ իւր սրտի խորքերից։ Նա մերթ գրում էր այժմ, մերթ մտածում և մերթ այս ու այն կողմն էր նայում, կասկածելով թէ ուրիշ աչքեր չեն տեսնում արդեօք իւր գաղտնի նամակի տառերը։ Վերջապէս աւարտելով նամակը ստորագրեց վերջ տուաւ իւրեան երկար տանջող աշխատանքին, վերցնելով սեղանի վրայից գրուած թուղթը և սկսեց բոլորովին խուլ եղանակով կարդալ հետևեալ խօսքերը։

2)

Թանկագին Վանեա!

—Քանի՞, քանի՞ անգամ, ես կամենում էի պատմել քեզ, այն ինչ, որ իմ սիրտի խորքումն է, բոլոր ինձ տանջող, ինձ չարչարող ու անհանգստութիւն պատճառող գաղտնիքների մասին, որոնք պահուած են սրտիս ու հոգոյս մէջ։ Ամեն անգամ ժողովում էի ոյժերս քեզ տեսնելիս, որ կարողանամ պատմել իմ միակ գաղտնիքներս, բայց նոյն րոպէին այն, նոյն վայրկեաններին խլում էր ինձնից քո հրապուրիչ պատկերը իմ ամբողջ ընդունակութիւններս և ես մնում էի լուռ ու համրացած։ Այդպիսով դարձեալ գաղտնիքներս մնում էր սրտիս վարագոյրի տակ ու աւելի ցաւացնող զօրութիւն էր ստանում։ Այդ լուռ դէպքերում միմիայն կարողանում էի քո հարցերին պատասխանել։

—Զգո՞ւմ ես արդեօք ինչ է իմ գաղտնիքներս սիրելի Վանիեա!։ Այն

օրուանից երբ քեզ տեսայ, սրտիս մէջ ընկաւ մի վառ կայծ և այդ կայծից օրից օր աւելանալով դարձաւ իմ մէջ մի անխաւար կրակ, որն սկսեց այրելու տանջել չարաչար իմ մատաղ սիրտս ու դեռահաս հոգիս։ Այն րոպէից սիրեցին քեզ։ Քեզ համար եմ ապրում և քեզ եմ միայն յիշում գիշեր ու ցերեկ։ Մտածում եմ, արդեօք ինչ պէտքէ լինի այս սարսափելի բոցավառ հուրի վերջը. որն այրում է երիտասարդ կեանքիս թելերը։ Վերջապէս ցանկանալով փարատմունք գտնել իմ վշտերին, վճռեցի մի վերջնական միտք, որն ահա գրում եմ քեզ։

Անմօռանալի Վանեա! Ահա չորրորդ ամիսն է, որ ես չափազանց թոյլ եմ ուսման մէջ. բացի դրանից, իմ ուսուցիչներս մօրս խնդրել են, նկատողական տոմսով որ աչքի առաջ ունենայ իմ թուլութիւններս։

Իհարկէ քեզ յայտնի է նրա բնութիւնը, թէ ինչպէս պէտքէ վարուած լինէր

ինձ հետ, այդ դու միայն երևակայիր։ Որքան աշխատանքներով ու ջանքերով պատրաստում եմ ուսումնական պատուէրները, բայց դարձեալ ոչինչ չիմանում իմ գլխիս մէջ։ Մտքերս շեղուելը ուսմանս մէջ, այն օրուանից է սկսուած երբ առաջին անգամը քեզ տեսայ։ Ուրեմն այն սէրն որը դու թողել ես իմ սրտի մէջ, այժմ փարատութիւն եմ խնդրում. այն վառ ու սարսափելի կրակը, որ հրել ու ձգել ես իմ սրտիս ու հոգուս մէջ ներկայում օգնութիւն եմ պահանջում։ Ի՞նչու իզուր ես պէտքէ ծածկեմ և ինչու հեռու պէտքէ գնամ ու ինձ վնասեմ. աւելի լաւն այն չէ որ խոստովանուեմ պարզը թէ սիրում եմ քեզ, և պէտքէ սիրեմ։ Սակայն երբ սիրում եմ պէտքէ ձգուեմ դէպի սէրն և ուրիշ ոչ մի կողմը։ Գուցէ երկար նամակովս քեզ գլխացաւութիւն եմ պատճառում, բայց և խնդրում էի, որ ներէիր ինձ։ Ներիր ինձ իմ հոգոյս հա-

տոր, և վերջ տուր ի սէրն Աստուծոյ իմ տանջաքներին։ Սրտիս ցաւալի վերքերին բժշկութիւն եմ աղաչում, դու ես միայն իմ անտանելի ցաւերի ընդունակ բժիշկը իմ աչքիս լոյս։ Միայն այն ժամանակ վերջ կըհամարեի այս տառապեալ կեանքիս, երբ մենք ձեռք ձեռքի տուած դուրս կըգայինք Ս. եկեղեցուց ստացած քահանայի օրհնութիւնը և նորա ամրացրած օղակը, որին կը կոչեն ամուսնութեան կապ։ Ա՜խ արդեօք կունենամ այնքան բախտ, որ ես ինձ տեսնեմ քո իշխանութեան տակ. Ո՜հ, այն ժամանակ ես ինձ ամենաերջանիկը կըհամարէի այս աշխարհում։ Իմ կեանք ու երջանկութիւնս միայն դու ես և հէնց դրանով կարող էիր ինձ կեանք տալ, երբ կըլինեմ քո սեպհականը։ Նոյն նախադասութիւններն էին, որ կապում են իմ լեզուն և ես չէի կարողանում պատմել քեզ, երբ կանգնած էի լինում քո դիմաց։ Ամօթը

սաստիկ կարմրեցնում էր իմ երեսն ու լեզուս համրացնում։ Երկար չ'դիմանալով, այս զարհուրելի վիճակին վազեցի թղթի ու գրչի մօտ, որ նամակով բացատրեմ քեզ իմ դաղանիքներս ու ստանամ անշուշտ պատասխան։

Քեզ անվերջ սիրող Նադեա։

Ահա այդպիսի մի երկար նամակ էր գրել ու պատրաստել։ Նամակը կարդալուց յետոյ, ծալեց գրած թուղթը դրաւ մի ծրարի մէջ, փակելով անյայտացրեց իր տետրակների մէջ։ Օրիորդը հաւաքեց սեղանի վրայի թղթեղէնները ու կարգով ամենը իր տեղը տեղաւորելուց յետոյ, պատրաստուեցաւ քնելու։

—Սիրտս բոլորովին փոխուելէ, նա-նամակը կարդալուց յետոյ կարծես թէ փոքր ինչ մեղմութիւն եմ զգում։ Ախ որքան հանգիստ է հոգիս, դրանից երեւում է, որ գրուածներս բարի հետեւանքներ պէտքէ ունենան։—Էլ ինչ բարիք, մի կատարեալ բախտաւորութիւն, մի

անտրտունջ կեանք կունենայի երբ ես կառանձնանի իմ թանկագին Վանեայի հետ, կ'ապրէի նրա քաղցր իշխանութեան տակ։ Գիտէք թէ որքան մաքուր ու գեղեցիկ ընակարան կ'ունենամ։ Մենք, 'ի հարկէ կըվարձենք մի ուրիշ տեղ առանձին տուն, կըգնեք լաւ աթոռներ, սեղաններ, պահարաններ և բոլոր տնային կահուկարասիքներ, դրանք բոլորը ես կարգով կըկարգաւորէի հմուտ տանտիկնոջ պէս, կ'ապրէի Վանեայիս հետ։ Երեկոները մենք դուռը կըփակէինք ու միասին թեւթեւի տուած կըգնայինք ըզբօսնելու այգին, կամ թատրոններ կ'այցելէինք։ Այն ժամանակ ես ոչ մի պակասութիւններ չէի ունենալ ու ինձ այսպէս պաշարած չէին լինիլ մտքերս հոգսեր։ Ոչ ուսումնարանում ուսուցիչներս կ'ամօթէին ինձ և ոչ էլ մայրը կարող էր ծեծել։ Այհա, թէ որքան երջանիկ կըլինէի եթէ այս երևակայութիւններս ցնորքներ չ'լինէին։ Մտածում

էր օրիորդը անկողնու մէջ պառկած ու ինքնիրեն ոգևորուելով այսպիսի քաղցր երևակայութիւնների մէջ։ Մի քանի բոպէներից յետոյ, սենեակը բոլորովին լըռեց, մեզ ծանօթ օրիորդը մտաւ մորփոսի խօրքը։

Կէս օրից անցել էր երկու ժամ։ Ուսանողները տուն էին վերադառնում։ Ծովի ափի լայն մայթերի վրայով քայլում էին երկու ուսանողուհիներ, որոնք իրանց աշխատանքները վերջացնելով, այդ օրը, գնում էին դպրոցից տուն։ Օրիորդները հագնուած էին մուք շագանակագոյն երկար հագուստներ, առջևներից կապած ունէին սև ուսումնական գոգնոցներ։

—Սիրելի ընկերուհիս, ասաց նրանցից մէկը միւսին. այսօր ես փոքր ինչ լաւ պատասխանեցի դասերս այնպէս չէ։

—Այո շատ լաւ պատասխանեցիք, ես տեսայ, որ դուք այսօր բոլոր գործողութիւններից 4 թվանշաններ ստացաք։

Ախ աւելի աշխատասէր կըլինէի... Ինչպէս, որ մի քանի ամիսներ առաջ, առաջի աշակերտուհին էի, բայց հիմայ մի արգելք կայ, որ ինձ ինձնից իմ բոլոր ոյժերս։

—Այդ ինչ արգելք է. Նադեա, որը ձեզ արգելում է ուսման մէջ և թուլաթիւն է, պատճառում ասաց երկրորդը առաջինին։

—Այո, ես չափազանց մեծ արգելքներ ունիմ, նամանաւանդ ուսման մասին։

—Հասկացայ, հասկացայ այդ ինչ արգելքներ են, պատասխանեց երկրորդը ուրախ ծիծաղելով։

—Բայց դուք ոչինչ չգիտէք, ասաց առաջինը փոքր ինչ գլուխը թեքելով։

—Հաւատցնում եմ, որ փոքր ինչ գիտեմ սիրելի ընկերուհիս, բայց ոչ բոլորը։

—Ի՞նչ է, ասացէք եթէ գիտէք։

—Ա՛յ, ինչ է. պատասխանեց երկրորդը, մի կողմ նայելով։—Անցեալ օրը,

ձեզ տեսայ այգու խուլ անգիւններից մէկում, դուք մի գեղեցիկ հայ երիտասարդի հետ խօսում էիք։

—Այո, հասկացել էք սիրելի ընկերուհիս, բայց խնդրում եմ որ ոչ ոքի դրա մասին ոչինչ չպատմէք. ասաց Նադեան խնդրողական եղանակով։

—Ոչ, ոչ. ես ոչինչ չեմ ասիլ ուրիշի միամիտ եղէք, բայց խնդրում եմ կրկին, որ պատմէիք թէ ով է նա, կամ որ տեղ ծանօթացաք նորա հետ։

—Դորա պատմութիւնը երկար է, ես վստահ չեմ, որ մինչև մեր բնակարանները հասնելը պատմութիւնս վերջացնեմ, աւելի լաւն այն է, որ թողնենք մի ուրիշ ժամանակ կըպատմեմ։

—Ոչինչ, մենք մեր քայլերը կըփոքրացնենք, պատմիր խնդրում եմ։

—Մի գեղեցիկ օր, ասաց Նադեան պատմական եղանակով, ես և մայրս գընացել էինք երկաթուղու կայարանը, մէկին ճանապարհելու։ Մենք երեքներս

անցանք I կարգի դահլիճը հանգստանալու, որովհետև կէս ժամից վեր պէտք էր սպասէինք շոգեկառքի ճանապարհուելուն։ Դահլիճում ճանապարհորդողների թիւը, որոնք նստած էին գեղեցիկ նստարանների վերայ շատ էին։ Մենք մօտեցաք մի նստարանի, որի վերայ նստած էին երկու կին մի ծայրում, իսկ մի երիտասարդ միւս ծայրում դահլիճի դռան մօտ։ Երիտասարդը գուշակելով որ մենք ցանկանում ենք նստել, սակայն երեքներս չէք տեղաւորուիլ յիշեալ նստարանի վերայ, վերկենալով նա իւր տեղից ու մեծ քաղաքավարութեամբ հրաւիրեց մեզ նստել։ Երիտասարդի քնքոյշ վարմունքը ինձ չափազանց գրաւեց։ Ես մի նուրբ հայացք ձգեցի նորա վերայ, տեսնելով, որ նա իւր կրակոտ աչքերով նայում է ինձ։ Մի քանի րոպէներ մենք միմիանցից չկարողացանք մեր ուշադրութիւնները հեռացնել։ Պարոնի հրեշտակային կերպարանքը ինձ այն աստիճանի

գրաւել էին, որ ես մոռացել էի թէ որտեղ եմ գտնուում, կամ թէ ինձ հետ միասին նստած է մայրս։ Իմ ոյժերս խըլել էր նա, ես մնացել էի մի խօսքով կաշկանդուած։ Վերջապէս առաջի զանգակը զանգահարեցին, մայրս առաջարկեց ինձ օգնել մեր ճանապարհորդողին, տեղաւորել նորա կապոցները, բայց խոստովանուում եմ, որ իմ կռներս ոյժից սպառուել էին ոտներս առաջ չէին ուզում գնալ։ Կասկածելով որ մի գուցէ մայրս կարող է նկատել, սակայն ժողովեցի ոյժերս ու ասացի մօրս։ Մայրիկ, ես հիւանդ եմ. այլևս չեմ կարողանում սպասել։ Մայրս տեսնելով, որ ճշմարիտ իմ դէմքիս գոյնը փոխուել է ուստի թողեց ինձ նստած կատարելով իմ պաշտօնը։ Իսկ յիշեալ պարոնը խելագարուածի նման աչք չէր վերցնում ինձնից։ Երրորդ զանգակից յետոյ ճանապարհուեց շոգեկառքը ու մենք վերադարձանք տուն։ Իմ հոգիս ու սիրտս մնաց այնտեղ կա-

յարանում։ Ես նոյն օրը, ոչինչ չկարողացայ ուտել, ոչինչ չկարողացայ սովորել։ Այդ էր իմ առաջի ծուլութեան օրը, որը շարունակւում է մինչև այսօր։

Նախընթաց առաւօտեան ես գիրքերը հաւաքելով գնացի ուսումնարան։ Իմ ոտները առաջ էին գնում կատարեալ մեռածի նման. իսկ ուշքս ու միտքս այն երիտասարդի մօտն էր։ Վերջապէս ես մոլորուած գնացքովս յետ նայեցի, բայց ինչ տեսայ, գիտես սիրելի ընկերուհիս միևնոյն երիտասարդը հետևում էր ինձ։ Նորան տեսնելուն պէս ես իսկոյն ցատկեցի մայթի վրայից ու ընկայ փողոցի մէջ, որ ուշադրութիւնս չկորցնեմ, կատարեց նա և այդ, ես փոխեցի ճանապարհս, որ մի կերպ հասնեմ ուսումնարան բայց նա ևս հետևեց իմ օրինակին։ Բոպէական միջոցներից յետոյ երիտասարդը մօտեցաւ ինձ ու ցածր ձայնով ասաց, «ով անգութ, ինչու՞ իզուր տանջում էք ինձ» բայց ես ոչինչ չպատասխանեցի այլ

քայլերս փոքր ինչ արագացրի։ Բաւականի տեղ հեռացած էի ինձ կարծում, փորձեցի դարձեալ յետ նայել. նայելով նորան գտայ կրկին, մի քանի քայլ հեռու ինձնից, որ դարձեալ մօտեցաւ ինձ ու ասաց միևնոյն խօսքերը։ Այս անգամ չդիմանալով նորա կրակոտ խօսքերին պատասխանեցի ես.

Ինչու ես անգութ եմ... լսելով իմ խօսքերը, նա մի տեսակ ուրախացաւ ու քայլերը արագացնելով բոլորովին մօտեցաւ ինձ ու դարձեալ ցածր եղանակով խօսաց.

—«Այո դուք չափազանց անգութ էք, նորա համար, որ իզուր տանջում էք ինձ։»

—Ինչու ձեզ պէտք է տանջեմ. կրկնեցի ես գետնին նայելով։

—«Մի՞թէ դուք չգիտէք ձեր արածը, մի՞թէ չգիտէք, որ ձեր անուշադրութիւններով ինձ ուղիղ կարող էք գերեզման տանել։ Ձեր հրեշտակային պատ-

կերը երէկ թողել է իմ սրտի մէջ մի սուր նետ. այժմ սաստիկ ցաւեցնում է նա իմ հոգին։ Ոհ, ես ցաւին չդիմանալով այսօր ընկնում եմ ձեր առաջը խնդրում աղաչում եմ, օգնեցէք ինձ, գթացէք 'ի սէրն Աստուծոյ, մի՛ք տանջիլ իզուր ինձ» այս խօսքերը մի այնպիսի եղանակով ասաց. թէ մարդ որքան ապառաժ սիրտ ունենար դարձեալ կըխղճահարուէր։

—Բայց ես ի՞նչով կարող եմ ձեզ օգնել, ասացի փոքր ինչ սիրտ առնելով։—«Դո՛ւք, այո՛, դուք ամեն մի քայլում կարող էք ինձ օգնել, իմ սրտի ցաւերին բժշկութիւն կարող էք տալ» ասաց նա։

—Ես չեմ հասկանում ձեր միտքը պատասխանեցի ես։

—«Վկայէ Սրարչի սուրբ անունը, որ դուք շատ պարզ հասկանում էք իմ միտքս ու նպատակներս։»

—Հաւատացէք պարոն, որ ոչինչ

չեմ հասկանում, բայց հետաքրքիր է ինձ իմանալ ձեր միտքը ասացի, գրքերովս երեսիս մի կողմը ծածկելով։

—«Դուք խոստովանում էք թէ ձեզ ոչինչ յայտնի չէ իմ մոլորութեան մասին, իսկ ես կըպատմեմ ամենապարզ ձեւով։ Գուցէ չէք մոռացել երէկուայ անցքը կայարանում։ Երբ, դուք մօտեցաք նստարանին իմ թշուառ աչքերը տեսան ձեր լուսնանման պատկերը, լիացայ ու մնացի շուարուած. իսկոյն ցատկելով տեղիցս, կարծես թէ մի էլէքտրական ոյժ, կամ մի մագնիտական զօրութիւն սկսեցին ինձ հրամայել ու ասել նայիր այդ ուսանող օրիորդին, լաւ նայիր, թէ որքան գեղեցիկ է, համաձայն նոյն զօրութիւններին, ձեր սիրուն գեղեցկութիւնը մոլորեցրեց ինձ, իմ աչքին, այլ ևս ոչինչ չերևացին, մթնեց բոլորը, խաւարեցան կայարանի պայծառ լուսամուտները և ես վայր ընկայ մի ուրիշ նստարանի վերայ։ Ես ևս ճանապարհորդ

էի, սակայն ձեր նուրբ ու քնքոյշ հայացքը, կաշկանդեցին իմ գնացքս, մտածեցի ու վճռեցի էլ չ'գնալ, էլ չ'հեռանալ այս քաղաքից քանի, որ դուք գըտնուում էք այստեղ։ Ձեր հեռանալուց ես խնդրեցի մշակներից մէկին, որ նայէ իմ իրեղէններին մինչև վերադառնալս ու սկսեցի ձեզ հետևել ծածուկ... իմանալով ձեր բնակարանի տեղը ես վերադարձայ կայարան հաւաքեցի կապոցներս ու յետ գնացի տուն։

Տեղաւորելով սլիտոյքներս սկսեցի մտածել. արդեօք ինչ ապագայ պէտք է ունենայ այս անցքը, երկար ծանր մըտածելուց յետոյ, այսօր ձեզ գտայ այստեղ։ Պատահելով ձեզ չափազանց ուրախացայ յոյս ունենալով, որ անպատճառ այսօր մի որևէ ուրախ պատասխան կը ստանամ ձեզնից։ Հիմայ ասացէք խնդրեմ, դուք զգում էք արդեօք իմ նպատակներս։»

—Ոչինչ չեմ զգում ասացի ես։

—«Մի թէ դուք չէք զգում, չէ որ ես ձեզ սիրում եմ։ Այս սիրում եմ ձեզ, ու ձեր սիրոյն պատճառով թողեցի իմ գնացքս և ընկել եմ փողոցէ փողոց, որ յայտնեմ ձեզ ու ստանամ պատասխան. ասացէք աղաչում եմ, դուք ևս կարողէք ինձ սիրել թէ ոչ։»

—Ես բոլորովին համրացայ այլևս պատասխանել չ'կարողացայ։ Կրկնեց նա միևնոյն բառերը մի քանի անգամ բայց ես լուռ էի։ Վերջապէս կանգնեցրեց նա ինձ ու դարձեալ ասաց միևնոյնը։

—«Կարող էք սիրել ինձ թէ ոչ»։ Զգիմանալով նորա վառ խօսքերին, ասացի։

—Այս կարող եմ։ Այս խօսքերը երիտասարդը լսելով, փայլեց նորա երեսը, ժպտացին կարմիր շրթունքները, ու մի ուրախ հայեացք ձգեցին իմ երեսին։ Այսպիսի երկար ու քաղցր խօսակցութիւններով մենք հասանք մինչև ուսումնարանի մօտ։ Մեր ծանօթութիւնը այնքան մօտեցան այդ օրը, որ մենք սկսե-

ցինք խօսալ միմեանց հետ դուռ բառերով։ Ձեռս սեղմելով նա հեռացաւ ինձնից, իսկ ես անյայտացայ ուսումնարան մտնելով։ — Այն օրուանից սիրելի ընկերուհիս, թուլացան իմ ուսման աշխատանքներս, որովհետև իմ սեպհական ուշադրութիւնս բոլորովին մոլորուած է, հէնց այդ արգելքներ են, որ խլում են ինձնից բոլոր աշխատասիրութիւններս։

— Բայց նա ինչով է պարապւում ասաց երկրորդ օրիորդը, առաջինի խօսքը կտրելով

— Հաշուապահութեամբ։

— Որտեղ է աւարտել։

— Թիֆլիս։

— Շատ լաւ, բայց միթէ ձեր մայրը ոչինչ չգիտէ դորա մասին։

— Մայրս, ո՜հ Աստուած մի արասցէ, եթէ նա գիտենայ ինձ կենդանի չի թողնիլ, ծեծելով կըմեռցնէ ինձ.

— Զարմանալի է, որ ձեր մայրը այսքան երկար ժամանակ ոչինչ չկարողացել հասկանալ։

— Գիտես թէ որքան զգոյշ եմ պահում ինձ, նորա ամեն մի նամակները ստանալիս կարդալուն պէս վառում եմ. չնայած, որ սիրտս շատ ցաւում է։

— Իսկ դուք, կամ նա, ինչ էք մըտածում, ձեր սերութեան վերջը մինչև որտեղ էք հասցնելու. ասաց երկրորդ օրիորդը։

— Կըհասնեն այնտեղ, որտեղ հարկն պահանջում է։

— Որտեղէ հարկը պահանջում։

— Ս. Եկեղեցին, քահանայի մօտ։

— Մի՞թէ։

— Ի՞հարկէ, որ ամուսնութիւնով պէտքէ վերջ տալ մեր տանջանքներին. միմեան ամուսնութեան կապը կարող է լուծնել բոլորին ու ազատել ինձ ուսումնարանի սպառնալիքներից։

— Բայց միթէ ձեր մայրը թոյլ կըտայ։

— Եթէ գիտենայ ի՞հարկէ ոչ։

—Սպա առանց գիտենալու ինչ պէս կարելի է։

—Սմեն բան կարելի է աշխարհում, ասաց Նադեան ու աւելացրեց, սիրելի ընկերուհիս, այս բոլոր գաղտնիքներս միմեան ձեզ եմ յայտնում, խնդրում եմ բացի ձեզնից ոչ ոք չգիտենայ։ Նադեան իւր պատմութիւնը վերջացնելուց յետոյ ձեռք սեղմեցին իրարու հետ ցտեսութիւն ասելով բաժանուեցին։

Գ.

Մեծ գեղեցիկ սենեակում, նստած էր աթոռի վերայ, գրասեղանի առաջ մի երիտասարդ։ Նորա լիակատար կազմուածքը, ու շքեղ արտայայտութիւնը ցոյց էին տալիս, որ ոչ աւելի քսանուհինգ տարուայ տարիքները։ Սենեակը զարդարուած էր նոր և փայլուն կահ-կարասիքներով, հմուտ ճաշակի համեմատ։ Նստած էր նա ճրագի առատ լոյսի առաջ ու ձեռին բռնած ունէր մի

նամակ, որի թերթերը բոլորն էլ գրուած էր ձեռագրերով։ Լուռ, աչք էր շրջում այդ տողերի վերայ ու ինքը իրեն զարմանում։ Գրուած թուղթը դնելով սեղանի վերայ մի քանի վայրկեան մտածելուց յետոյ, սկսեց խօսալ մեղմ եղանակով։—Ոչ, ես չեմ հաւատում իմ աչքերին, թէ նա մի այսպիսի նամակ կըլինի գրած։ Այո իմ աչքերը ինձ ատում են, իմ ուշադրութիւնս խափանուած է, սրանք բոլորը երևակայութիւններ են։ Միթէ, նա կամենում է ամուսնանալ, միթէ, նա իւր ուսումը թերի է թողնում։ Ոչ, ոչ ես ուղիղ չեմ կարդում, իմ միտքս լաւ չէ ըմբռնում այս նամակի բովանդակութիւնը։ Ուրեմն թող ես կարդամ այս նամակը մի քանի անգամ գուցէ հասկանամ աւելի պարզը։

Ասաց ու նորից վերցրեց յիշեալ նամակը և կէս ժամից վեր կարդալով մի քանի անգամ, կրկին թողեց սեղանի վերայ ու ինքը տեղից վերկենալով, ձեռ-

ները խցեց վարթիկի գրպանները ու ըսկսեց անցուդարձ անել սենեակի ազատ կողմերը։

—Ձշմարիտ է, խօսաց նա, Նադեան ցանկանում է ամուսնանալ ինձ հետ, որ դրանով վերջ տայ մեր չարչարանքներին։ Ուրեմն, ինձ պէտք է համարեմ այսուհետև ամենաբախտաւորը, ուրեմն ես պէտք է ունենամ մի այնպիսի գեղեցիկ կին ինչպիսին, որ իմ սիրելի Նադեան է։ Ա՛խ Նադեա, Նադեա, մի թէ դու, ինձ այդ աստիճանի սիրում ես, մի թէ քո զգացմունքները այդքան վառ են եղել դէպի ինձ, ես մինչև այսօր դեռևս չէի հաւատում ու չէի սպասում քեզնից մի այսքան հրաշալի նամակ։ Բախտաւոր եմ ես, այո՛, բախտաւոր եմ բոլոր ընկերներիս մէջ։ Բոպէական լռութիւնից յետոյ, նա դարձեալ շարունակեց.—Ես հոգով ու սրտով յօժար եմ ունենալ մի սիրուն ընկեր ցանկալի Նադեաս. բայց ինչ միջոցներով, ես այդ չեմ հասկանում։ Ինչ-

պիսի հնարներով կամ ումնից պէտք է խնդրել քո ձեռը։ Գիտեմ քո անխիղճ մօրդ բնութիւնը, որ նա բնաւին գութ չունի, նրան Աստուած առանց խղճի է ստեղծել դէպի քեզ։ Եթէ ես մտնեմ նորա մօտ ու ամենայն համեստութեամբ խնդրեմ քո ձեռը, նա ինձ մեծ կոպտութեամբ կըմերժէ, եթէ պատմեմ բոլորը ու յայտնեմ իմ գաղափարներս, թէ յարգելի մայր, մենք բաւականի երկար ամիսներ է, որ սիրահարուած ենք միմեանց հետ, այժմ ցանկանում եմ խորին հարգանօք ձեր աղջկայ ձեռը, նա իւր պատիւը պաշտպանելու համար, ինձ խայտառակ կերպով կըհրէ, սարսափելի սպառնալիքներով, զայրացած դուրս կանէ իւր տնից։ Հաւանական է, որ մեծ պատվի պակասութիւն է ծնողաց համար, երբ ուսանողուհին թոյլ տայ ուսումը թերի կերպով ու վաղէ ամուսնութեան յետեւից։ Վերջապէս չեմ գտնում հնար սիրելի Նադեա, ոչ մի կերպ չեմ կարողա-

նում միջոցներ ունենալ կատարել քո մտադրութիւնները։—Տէր իմ, թէ թողնեմ այս նամակի մտքերը անորոշ ու անուշադրութեան տակ, այն ժամանակ կըմնայ իմ քաղցր էակը արտասունքոտ աչքերով, եթէ կատարեմ, ու ամուսնանամ, ես բոլորովին խայտառակուած կըլինեմ։ Այսպէս մեզ ծանօթ երիտասարդը քայլում էր իւր սենեակի մէջ ու դատողութիւններ անում։ Մօտեցաւ նա գրասեղանին ու դարձեալ նստեց աթոռի վերայ շարունակելով իր ցածր ձայնով խօսակցութիւնները։ —Ոչ, ես ընդունակ չեմ մերժել ու թողնել իմ սիրուհուս անուշադրութեան տակ։ Ես սիրում եմ նորան և այդ սիրոյն պատճառով անշուշտ պէտք է կատարեմ նորա խնդիրքները։ Գնում եմ պարտք այս բոպէից իմ շլնքին ու երդւում եմ, որ եթէ սիրուհիս լինի, մի վիթխարի առիւծի գրքում կամ Ովկիանոս ծովի տիեզերներում, կամ թէ երկնքի ամպերի ու թխպերի խոր-

քերում, առանց սոսկալու ու վախենալու կռվեմ, այդ ուժեղ հերոսների, հետ մինչև իմ վերջին շունչս։ Յետ առնեմ նրանցից իմ թանկագին գանձս, խլեմ ու սեպհականացնեմ ինձ, իմ միեակ սիրելուս։ Գուցէ կարողանամ այն ժամանակ վերջ տալ մեզ տանջող, չարաչար տառապանքներին։ Երիտասարդը դարձեալ լռեց, կռները դնելով սեղանի մակերևոյթի վերայ երկու ափերով բռնեց գլխի երկու կողմերը, մի խոր հոգոց հանելուց իր սրտի խորքերից, սկսեց նորից մրմնջալ։—Այո մեռնելուց ես չեմ վախենում ցանկալի Նադեա, հաստատ հաւատացած եղիր, որ սիրում եմ քեզ. և հէնց այդ կրակոտ սիրոյն պատճառով կ'աշխատեմ ամեն մի կերպ, թէ հնարներով և կամ թէ ճարպիկութիւններով վերջ տալ քեզ և ինձ սարսափելի հալու մաշ անող անհանգիստութիւններին։ Բաւական է, որքան մենք ծածուկ իրարու սիրեցինք, բաւական է, որքան գող

աւազակի պէս կեանք վարեցինք։ Այժմ ես պատրաստ եմ կռուել, ոչնչացնել կամ ոչնչանալ մեր թշնամիների դէմ։ Չնայած, որ իմ լուսահոգի հայրս ու մայրս միշտ զգուշացրել են խրատներով ինձ այդպիսի կեանքերից։ Հարազատ ծնողներս ինչո՞ւ դուք այդքան հեռու էք ինձնից, ինչո՞ւ դուք այդքան շուտ հրաժեշտ տուիք աշխարհին ու պառկեցաք հեռու մի քանի հարիւր վերստեր սև ու սառ հողի խորքերում։ Դուք, որ միշտ ձեր կենդանի ժամանակներում, նախազգուշացրել էք զանազան ապացոյցներով, հեռու ապրել մոլորեցնող կեանքերից, չունենալ վտանգաւոր ապագաներ, որովհետև այդ չէ պահանջում մարդկային օրէնքները։ Իսկ ես, քաղցր ծնողներս ամենայն խոհեմութեամբ ոյժիս չափ աշխատեց ապրել, հեռու շատ հեռու ձեր նախազգուշացրած օրէնքներից, բայց այդ անկոչ հիւրի նման անիրաւ կեանքը, վազելվազ հասաւ

իմ յետևից, բռնեց, ո՛հ ամուր գրկեց իր ոյժօտ թևերով, շղթայակապ արեց իմ ոտներս ու ձեռներս խղճացնելով ինձ, իրան գերի ու ստրուկ դարձրեց։ Առաւ նա իր մոլորական խտիտը, ինձ քաշեց, քաշքշեց տարաւ տուեց այս սոսկալի վիճակը։ Աշխատում եմ մի կերպ հեռանալ, բայց իմ հողեղէն բնութիւնս տկար է, այդ սիրոյ առջև։ Պարտաւորուած ընդունեցի նորա նուիրած ճակատագիրը, որը ինձ համար նա դրոշմել էր ու կնքել։ Ուրեմն այդպէս գերամեծար ծնողներս, ես չկարողացայ կատարել այն բարի ու օգտաւէտ խրատները, որոնք դուք մի քանի տարիներ առաջ սովորեցրեցիք ինձ։ Մերժում եմ ներկայում ու հեռանում, այն սքանչելի օրէնքներից որոնք։ դուք հարազատ ծնողներս տնօրենեցիք։ Իսկ ես ինչպէս մի անառակ որդի գիտութեամբ թքեցի ձեր ծնողական բարի խրատների վրայ։ Հասկանում եմ, որ սխալ եմ, բայց ինչ կարող եմ անել։

երբ այդ անխիղճ ու կրակոտ սէրը, բըռնած է ինձ ու թեքելով մի կողմիս վերայ չթողնում որ ուղղվեմ։ Յիշում եմ հայր, քո պատմութիւններից մէկը, որն պատմում էիր քո երիտասարդութիւններից մի գիծ և նախազգուշացնում էիր ինձ, չլինել այնպիսի կարճատես երիտասարդ ինչպէս որ դու ես եղել փոքր ժամանակներ։ Յիշում եմ հայր, որ դու քո պատմութեան մէջ ասում էիր, թէ ինչպէս սիրահարուած ես եղել մի գերմանուհու վերայ և նորա հետ միասին թողել ես քո հայրական տունը, փախուես կրել հեռու երկիրներ։ Ապրել ես միևնոյն գերմանուհու հետ երեք երկար տարիներ։ Պատմում էիր քո կեանքդ, թէ ինչպէս սիրում էիր նրան և թէ ինչպէս քո բոլոր աշխատանքները ուտեցնում ու հագցնում էիր այն կնոջը որին դու սիրում էիր։ Լուսահոգի հայր, լաւ յիշում եմ, որ ասացիր յիշեալ կինը, թէ նա քեզ սիրում էր կեղծ և ոչ այնպէս-

ինչպէս դու նրան։ Խորամանկութիւնով լափեց նա, բոլոր քո աշխատանքերդ ոտնատակ արեց, այն ջերմ ու հին պատիւդ, որոնք թողել էին ծեր հայրերդ։ Վերջապէս ականատես լինելով դու նորա կեղծութիւնը թողեցիր անուշադրութեան ներքոյ ու հեռացար։ Գալով նորից քո հայրենիք զղջացիր այդ կեանքի վերայ, ներողութիւն խնդրելով ծնողներից ամուսնացար իմ մօրս հետ, որով վարեցիք երկար սուրբ կեանք։ Մայր իմ, անուշ մայր, քանի քեզ յիշում եմ աչքերս լցւում են արտասուքներով.—ախ իմ բազմաերախտ ծնող, վերկաց այդ սառը տապանից ու տես թէ քո միակ որդին ինչպիսի տարակուսանքների մէջ է։ Վերկաց և տուր մխիթարութիւններ քո որդու խցուած և անմխիթար սրտին։ Մայր, քաղցր մայր, դու դժբախտացրիր ինձ քո մահովդ, տարար քո դեակիդ հետ բոլոր երջանկութիւններս։ Էլ չունիմ մէկը, որ կարողանայ թեթևացնել

իմ հոգեկան վշտերը։ Էլ ո՞ւմ պատմե-
ցաւերս, ում մօտ գնամ, ո՞ւմ գանգատ-
վիմ իմ թշուառ բախտից։ Մայրիկ բա-
աչքերդ ու նայիր քո որդուն նա ցան-
կանում է ամուսնանալ։ Ներիր ինձ մայր
ես թողնում եմ քո խրատներ և անու-
շադրութիւնների տակ։ Դու և բաւա-
կանի նախազգուշացրիր ինձ քո կենդան-
ժամանակներում։ Օրինակ էիր տալիս
ինձ, քո ամսնուդ երիտասարդ ժամա-
նակուայ սխալ կեանքը, որն զրկեց այ-
ժամանակ, երբ նա բոլորովին անպատի-
էր դառել իր ազգ ու բարեկամների դէմ
Ներկայումս ես սիրահարուել եմ մի ուսանո-
ղուհու վերայ ու ցանկանում եմ ամուս-
նանալ և շատ ու շատ անէցքների տէր
դառնալ, որը կըթափուէ սիրուհուս մօ-
բերնից։ Այս էր ահա մրմնջում Յովհան-
նէսը։ Լսելով հանեց գրպանից թաշկի-
նակը սրբեց արտասուքներից թրջուած
աչքերը և կարծես թէ նրան զըզվանք
պատճառեցին աթոռը, որի վերայ նստած

էր։ բարկացկոտ եղանակով բարձրացաւ
տեղից ու գնաց մահճակալի վերայ պար-
կեցաւ, որը դրուած էր սենեակի մի
պատի տակ։ Մի քանի րոպէներից յետոյ
խփեց աչքերը, սենեակը մեռելային
դիրք ստացաւ։

Դ.

Բարեպաշտ քրիստոնեաներին իրե-
կուայ ժամն էր հրաւիրում եկեղեցու
քաղցրահնչիւն զանգակները։ Օրը մթնե-
ու վրայ էր։ Արևը սկսում էր վերջին
բարևը տալ քաղաքին և իւր դեղնագոյն
անգոր ճառագայթներով պսպղեցնել
բարձր շինութիւնների գագաթները։
Բանւոր դասակարգի մարդիքը տուն էին
վերադառնում, հանգստանալու և ուրա-
խացնելու իւրեանց ընտանիքներին։ Ա-
մենքը ուրախ, դիմաւորում էին գիշե-
րուայ մութ խաւարին, որը քիչ յետոյ
տիրելու էր աշխարհին։ Իւրաքանչիւր
տանտիկին թէյ վայելելու պատրաստու-

թիւններ էր տեսնում։ Որը հրամայում էր իւր աղախնուն, որը իւր չափահաս աղջկան, որը մանկահասակ նորահարսներին և որն էլ ինքը ենձամբ էր կատարում նոյն պաշտօնը։ Վերջապէս լոյսը վերջին հրաժեշտներով ողջունեց երկրին ու հեռացաւ իւր ծառայութիւններից, հանձնելով գիշերային թագուհուն տիրել ընդհանուր բնութեանը։ Գիշերը ժամանակաւոր ունդունելով այդ ծառայութիւնը, սկսեց աւելի խնամքով կատարել մի և նոյն գործը և ստէպ առ ստէպ ուժեղանալով, որ գործունեայ դառնայ։ Այդպիսով փոխեց նա բնութեան գոյնը և մի տեսակ սև արտայայտութիւն ստացաւ որին մենք յերեկոյ ենք անուանում։ Այդ միջոցին մի կին, մի թշուառուհի, փողոցից փողոց ընկած, փնտռում էր մեկին։ Նա դեռ ինքնահեռ չէր պատրաստել ու չէր էլ ցանկանում թէյ վայելել, ինչպէս, որ ուրիշ կանայք, այլ արտասունքոտ աչքերով խելագարի

նման որոնում էր մի կորուստ։ Նրա ըզգեստները, ոտից մինչև գլուխ սև էին, ինչպէս մի սգաւոր այրի։ Գլուխը ծածկած էր մի և նոյն սևագոյն մեծ ծածկոցով։ Դէմքը նիհարուած, գլխի մազերը ճերմակած, աչքերը մեծմեծ ու զայրացած։ — Էլ ո՞ւր գնամ, որտեղ փնտռեմ նորան, Աստուած իմ, ամեն բարեկամի ու ծանօթների տները գնացի, բոլորիցն էլ հարց ու փորձ արի չկայ ու չկայ։ Խօսաց մտքում մեզ ծանօթ ծեր կինը մօտենալով Հ. եկեղեցւոյ կանաչազարդ բակի դռանը։ Նա իւր ձեռները փոքր ինչ բարձրացրեց դէպի երկինք ու նորա գունատ շրթունքները մրմնջացին մի կարճաբօտ աղօթք, յետոյ երեսին խաչ հանելուց յետոյ շարունակեց իւր գնացքը։ Առնելով յարգելի ընթերցողի հետաքրքրութիւնը ու գնամ նրա յետևից իմանալու, թէ արդեօք ուր գնաց կամ ինչ նպատակով... Քառորդ ժամից յետոյ հասաւ նա քաղաքական այգին։ Մտնե-

լով այգու մէջ սկսեց փնտռել ամեն կողմերը։ Բայց ոչինչ չգտաւ. դուրս գալ մտածեց վերին դռնով ու գնաց մի մեծ շինութեան դռան, մօտ, որը զտնուում էր այգու դէմ։ Վայրկեանական մտածելուց, ներս մտաւ մի և նոյն դռնով ու անյայտացաւ շինութեան խուլ սենեակների մէջ։

—Այստեղ ևս չկայ. վերադառնալով թաշկինակը ձեռին արտասուքները սրբելով ասաց կինը.—Էլ որոնելու տեղ չունիմ էլ փնտռելու ու հարց ու փորձ անելու կամք չունիմ։ Մութը և վրայ է հասել, մթնեց և սիրտս, սևացել է աչքերս խօսում էր ու հեղեղի նման արտասունք էր թափում։ Տարակուսուած թշուառուհին, դանդաղ քայլերով առաջ էր գնում։ Յանկարծ նորա դէմքը փայլուեց ու սկսեց քայլերը արագացնել, կարծես թէ նորա շղուած միտքը մի նոր բախտաւոր բան յիշեց։ Կինը գլխի ծածկոցը ուղղելով ասաց ինքը իրեն.—Դր-

նամ տուն գուցէ տուն է վերադարձել. այդ միտքն էր, որ նորա դէմքը փայլեցրեց և քայլերը արագացրեց դէպի իւր բնակարանը։ Բայց ո՞վ էր այդ խեղճ կինը, այդ թշուառ արարածը, որ այդքան ժամերով, մութ գիշերուայ մէջ, ընկած փողոցից փողոց, կամ նա ումն էր որոնում այդպէս արտասուալի աչքերով։ Դա մայր էր մի դստրի, որի աղջիկը առաւօտեան ժամի ութից, մինչև յիշեալ րոպէն անյայտացած էր։ Ոչ ոք չէր այդ կինը, եթէ ոչ, մեզ ծանօթ Նադեաի այրի մայրը։

Այրի, կնոջ բնակարանը բաւականի հեռաւորութիւն ունէր քաղաքի կեդրոնից։ Նորա դրացուհիները խառնուել էին միմեանց ու բոլորը միասին հաւաքուել էին բակի մեծ դռան մօտ և զանազան տեսակ կարծիքներով, մարգարէութիւններով ու դատողութիւններով էին զբաղուած։ Մէկը, նրանցից ասում էր.—ես այսօր առաւօտեան տեսայ նը-

ըան ուսումնարան գնալիս, բայց ձեռի գրքեր չուներ։ Միւսը աւելացնում է — այո առաւօտեան նա շատ վաղ է արթնացել. երրորդը,—կարելի է մէկ հետ սիրահարուել է ու նրա հետ է փախուստ է կրել. մինթէ դուք չէիք նկատում նորա աչքերի հետաքրքրութիւնները, որ մի այնպիսի հայացք էր ձգում մարդու վերայ, քիչ էր մնում իւր հակառակորդին կլանել իր փայլուն աչքերով։ Չորրորդը գրանց կարծիքները ծածկելու համար, ասաց.

Գուցէ, նա իւր ընկերուհիների մօտ նէ, ինչո՞ւ դուք այդպիսի դատողութիւններ էք անում։

— Ոչ ոչ, նա ոչ մի ընկերուհու մօտ չէ, մենք նորա բնութիւնը լաւ գիտենք որ առանց մօրը իրաւունքի ոչ մի տեղ չի հեռանալ, ասաց երրորդը, չորրորդին։ Այսպէս, ահա խօսում էին գրացուհիները միմեանց հետ ու սպասում էին դռան մօտ, երկու անձնաւորութեան։

— Բաւական է որքան այս դռանը մօտ կանգնեցինք, ասաց գրացուհիներից մէկը։

— Մի քանի րոպէներ էս սպասենք, գուցէ վերադառնում են, պատասխանեց մի ուրիշը։

Վերջապէս մեր գրացուհիները իւրեանց նպատակներին հասան։ Փոքր ժամանակից յետոյ ներս մտաւ կայծակի արագութեամբ մի կատաղած աչքերով կին, որը տեսնելով իր գրացուհիներին բակի դռան մօտ կանգնած, իսկոյն կանգառաւ, մնաց լուռ ու փայտացած։ Կարծես թէ նորան թւում էր, որ իր յոյսերը կատարուած չպէտք է լինէին, նա սիրտ չեր առնում հարցնել գրացուհիներից իւր կորուստի մասին, որ մի գուցէ անյաջող պատասխան կըստանար։ Այսպէս մի քանի րոպէներ սառած կանգնելուց յետոյ, հաւաքեց իր ոյժերը, դարձաւ դէպի գրացուհիները ու հարցրեց մեղմը և յոգնած ձայնով։

—Մ'ԷԹԷ նա դեռ տուն չի վերադարձել։

—Ոչ. ամենքը մի կողմից ասացին դրացուհիները։

—Ահա մի սարսափելի դժբաղդութիւն, որ շրջապատեցին իմ շուրջը։ Ատուած իմ, այս ծերութեան օրերումս սա և պէտքէ տեսնէի ու սպիտակած վարսերս հողին հաւասարէի։ Ո՛հ բաւականի մեծ ձախորդութեան հանդիպեց իմ պատիւս։ Այն պատիւներս, որն ես պահպանել եմ սրբութեամբ մինչ այսօր։ Ախ Նադեա, Նադեա, այդ ինչ է քո արածը։ Մի՞թէ դու ցանկանում էիր, որ ինձ խայտառակուած գերեզման տանեն. ո՛հ, դու անառակ աղջիկ։ Մի՞թէ այդ էր քո ուսումնարանում ուսումնասիրութիւններդ։ Ա՜խ թող կուրանան իմ աչքերս, խլանան իմ ականջներս, որ չլսեն ոչ մի խայտառակ լուրեր։ Մահ, մահ, ուրեմ եկ, տար իմ հոգին էլ չեմ կամենում խայտառակուած ապրել։

Այսպիսի աղեկտուր խօսքերով, և հեկեկալով թողեց դրացուհիներին իւրեանց տեղերը ու ինքը հեռացաւ դէպի իւր բնակարանը։

—Խեղճ կին, ասաց նրանցից մէկը, այրի կնոջ անյայտանալուց յետոյ։ Շատերն ասում են, աղջկան ուսում պէտքէ տալ, որ ուսմով ու կրթուած լինի։ Ահա սա, էլ ուսմով ու կրթուած օրիորդ. նայեցէք թէ, ինչ խաղ խաղաց իւր ծերունի մօր հետ. և ո՞վ գիտէ՝ թէ ինչ հետևանքներ կունենան Նադեայի անյայտանալը։

—Ուսումն ու կրթութիւնը բոլորովին յանցաւոր չէ, եթէ ուսանողը վատ վարքի տէր է։ Դուք դատում էք բոլորովին սխալ. ձեր կարծիքներով բոլոր ուսանողուհիները պէտքէ մի և նոյն օրինակին դիմեն ինչին որ Նադեան դիմեց։ Ոչ, ոչ թողէք այդպիսի դիտաւորութիւնները, հաստատ և ճշմարիտն իմացած եղիք, որ բոլոր համեստուհի

ուսանող բերում է մեծ փառք ու պատիւ իւր ծնողների ու բարեկամներուն վերայ, պատասխանեց երկրորդ կինը։

—Ինչ ենք, այս մութ տեղը կանգնել, գնանք սենեակ և այնտեղ խօսենք աւելացրեց երրորդ կինը խնդրելով ընկերուհիներին, որ գնան իր հետ միասին իւր բնակարանը։ Դրացուհիները չ'մերժելով երրորդի խնդիրքը խմբով մտան նրա սենեակը։

—Դուք ասում էք թէ, սկսեց խօսալ երկրորդ կինը ամենքի հետ, փոխում է ուսումը օրիորդների վարքը ու նրանց դէպի վատն է տանում, իսկ ես հաստատում եմ դրա հակառակը, թէ ուսումն ու կրթութիւնը աւելի բարձր վարքի ու համեստութեան մայր է, քան խուլ, ճպռոտ ու կեղտոտ տգիտութիւնը։ Բիւր հազարաւոր օրիորդներ ցոյց կտամ, որ դուրս գալով տգիտութեան խորքերից, վազելով մտել են ուսման ու կրթութեան ասպարէզների մէջ, ուսումնասիրելով, կրթուելով, դարձել են ուսումնագիտ, խելացի և բաղդաւոր մայրեր։—Ուսումն բաց է անում այն կեղտոտութեան վարագոյրը, որը տարիներով ծածկուած է մնացած։ Գիտութիւնը հանում է այն վարագոյրի յետևից գարշահոտ ու կեղտոտ տգիտութիւնը և փոխարէնը դնում է անուշահոտ ու ըսքանչելի մաքուր իմաստութիւններ։ Այնուամենայնիւ թողնում է բաց յիշեալ վարագոյրը, որի հոտից և գործերից բոլոր ստեղծուածները զմայլուին ու իմանան, որ ոչինչ ծածուկ գաղտնիքներ չունի ուսումն և գիտութիւնն։—Երևակայեցէք և մտաբերեցէք մեր օրիորդ ժամանակները։ Մեր ծնողները մեզ արգելում էին, չերևալ ոչ մի տղամարդկանց առջև. «ամօթ է» նրանք մեզ ուսուցանում էին, «աղջիկը իրաւունք չունի երևալ ոչ մի մարդկանց առաջև բացի իւր հասակակից ընկերուհիներից։» Մենք, ևս կատարում էիք նրանց սարսափելի

հրամանները։ Բայց գիտէք թէ մեր սրտերը մեզ ինչ հարցեր էին առաջարկում։» Ինչո՞ւ մենք պէտք է ծածկուենք, ինչո՞ւ մենք չպէտք է խօսանք տղամարդկանց հետ, այդ ինչ է նշանակում։» Մեր քնքոյշ սրտերի մէջ ծագում էր մի այսպիսի կասկածանքներ և հէնց այդ կասկածանքներն էին, որ մեր սրտի զգացմունքները, մեր աչքի լոյսերը, գողութեան պաշտօն էին ստանում։ Այն ժամանակներում մենք օրիորդներս, երբ տեսնում էիք մի ծանօթ կամ անծանօթ և կամ բարեկամ երիտասարդներ, մենք իսկոյն փախչում էիք ծածկւում մի անկիւնում ինչպէս, որ մեր ծնողները մեզ դասաբարակել էին։ Հիմայ դուք նայեցէք թէ մենք մեր ծածկուած տեղերից ինչեր չենք անում։ Ժողովում էիք մենք մեր բոլոր ոյժերը մեր աչքերի լոյսի մէջ ու սկսում էիք նայել ծածուկ, այն էակին որին մեզ արգելուած էր։ Մենք մեծ հետաքրքրութեամբ

ցանկանում էիք հասկանալ այն պատճառները, թէ ինչու մեզ արգելում են, որ չխօսալ և չերևալ տղամարդկանց աչքերին։ Վերջապէս երկար քննելուց յետոյ մենք հասկացանք թէ բանն ինչումն է, այն ժամանակ մենք դառնում էիք անորոշ սիրահարներ, դէպի ընդհանուր երիտասարդները։ Եթէ նրանցից մէկը մի որևէ ծածուկ տեղ ընկներ մեր ճանկերը մենք այլ և այլի չէիք խնայիլ մեր քաղցր կեանքը նրանցից, որովհետև մեր ծնողները, մեզ կարօտ էին թողել երիտասարդներից։ Այժմ ներկայ կեանքը, ներկայ ուսումը և գիտութիւնը բաց է արել այն վարագոյրը, որի յետևում ծածկուած էիք մենք. նա էլ կարօտ չի թողնում օրիորդները երիտասարդներից։ Ինչպէս ասացի ներկայ ուսումը ու գիտութիւնները հասկացնում է, թէ ուսանողներին և թէ ուսանողուհիներին ամենայն տեսակ կեանքերը, հասկացնում է նա և չարն ու բարին, ըմբռնեցնում

է նրանց խելքի ու ուղեղի մէջ, թէ որն է չար ու վնասակարը, և կամ բարի ու օգտաւէտ։ կեանքերը։ Ասացէք խնդրեմ ինչով է մեղաւոր, կինը կամ օրիորդը երբ նա իր մօր արգանդում աղջիկ է գոյացել։ Նա, այն փոքրիկ անմեղուհին արդեօք ինչ յանցանքի տէր է, որ Աստուած նրան աղջկայ մարմին պարգևեց, ծնուելով, երկար ու երկար տարիներ բանդարկուած մնան, մինչև նորից կըրկին հողի արգանդ մտնելը։ Ինչով բաղդաւոր է փոքրիկ տղան, երբ նա բնութիւնից տղայի կազմուածք ստացաւ, ծնուեցաւ բաղդաւոր, մեծացաւ ու բոլոր իրաւունքները խլեց դժբաղդ օրիորդներից ու կանայքից։ Ապրելով երկար տարիներ ու մեռաւ դարձեալ բաղդաւոր։ Ահա մտաբերեցէք թէ որքան դժուար էր մեր ժամանակներում օրիորդներիս համար, թէ որքան ծածկուած ու խիստ հսկողութեան ներքոյ էիք պահուում։

Այո, ներկայ դպրոցները չեն հաս-

տատում այդ սարսափելի ժանգահոտ օրէնքները, այլ նրանց հաստատութիւնները այնէ, որ իգական և արական ըստեղծուածներ բոլորը մի իշխանութիւնով պէտք ապրեն։ Ծնողները չպէտք տարբերէն դրանց պատիւները միմիանցից։ «Ինչու, ամուսինը իւր կնոջից աւելի իրաւունքների տէր պէտք լինի, թէ տնային գործերում և թէ դրսի գործերի մէջ, ~~հարցնում է լուսաւորութիւնը,~~ չէ որ կինը միևնոյն իշխանութիւնը պէտք ունենայ, ինչ որ ամուսինը ունի։» Հաստատում է այդպիսի օրէնքներով այն պայծառ գիտութիւնը և ուսումը որտեղ, որ սովորում էր և Նադեան։

— Ահա այդպիսի քարոզութիւններ են լսում ուսանող օրիորդները, որ այդքան կատաղում են։ Թողնելով մօրը արտասուքի և ցաւակցութիւնների մէջ... երկրորդի խօսքը կտրելով ասաց դրացուհիներից մէկը. որը բոլոր խօսակիցներից հասակաւորն էր։

—Ես կարծում եմ, թէ այն քարոզութիւնները, որն լինում է ուսումնարանների մէջ, երբէք ուսանողներին վընասակարներ չեն, այլ միմիայն բարի ու բաղդաւոր, օգտալի ապագաներ, պատասխանեց երկրորդը։

—Հա՛, հա՛, հա՛, ծիծաղեց հասակաւոր կինը,—դրանից էլ մեծ վնաս, եթէ Նագեան ուսանող չլիներ, այսօր ամբողջ օրը կորած չէր լինիլ։

—Բայց գիտես քոյրիկ, ուսումը բընաւին յանցաւոր չէ Նագեաի կորստեան պատճառով։ Ուսումնարանում չեն սովորեցնում ուսանողներին, որ թողնեն իւրեանց հայրական տները ու փախուստ կրեն իր հարազատ ծնողներից։ Յանցանքները նորա տնային դաստիարակութիւնումն է, եթէ Նագեան տեսած չլիներ այդպիսի վարքեր կամ լսած իւր աղգութեան մէջ ու այդ կեղտը խառնուած չլիներ նորա արիւնների հետ, նա երբէք ընդունակութիւն չէր ունենալ փախուստ կրելու

ու պատճառ դառնալ ու շատ ռամիկ մայրերի, որոնք կըդատեն այնպէս, ինչպէս որ դուք էք դատում ասելով, թէ ուսումը ու կրթութիւնը վնասում է օրիորդների վարքերին։ Բայց պէտք էր այդ դասակարգի մայրերն լաւ հասկանան, որ ուսումը մաքրում է՝ բնութիւններ, վարքեր ու համեստութիւններ ժառանգային կեղտերից։ Մաքրելով հեռացնում է, հեռու վտիտ կեղտը ու առնում է իր գիրկը, սուրբ մաքրութիւնը։ Պահում պաշտպանում և ապագայում գիտուն ու իմաստուն մարդ դարձնում։—Աւելի պարզն ասեմ. շարունակեց նա,—մի փոքրիկ օրինակով։ Մենք կանայքս կարծեմ բոլորներիս էլ պատահած կըլինեն։ Մեր կոտրատուած զարդերի կտորները ժողովելով, (արծաթի կամ ոսկու), կամեցել ենք մի ուրիշ բան պատրաստելու։ Դրա համար հրաւիրած կըլինենք մի ոսկերիչ վարպետ և խնդրած որ նա նոյն մետաղները ձուլէ և մի հարկաւոր զարդ

պատրաստէ, 'ի հարկէ մեր ոսկու կամ արծաթի ծանրութիւնների համեմատ։ Վարպետը անշուշտ կը կատարէ մեր պատուէրները։ Նա կառնէր իւր փոքրիկ կշիռը ու մեր ներկայութեամբ կը կշռէր։ Տանելով իւր հետ մետաղեղէնը կը սկսէր գաղափարի մէջ կազմել վերոյիշեալ պատուէրը։ Զուլելով կածէ գաղափարը տաք հեղուկը իսկ միւս ձեռով կը մաքրէ հեղուկի երեսի կեղտը, որ գործը աւելի մաքուր լինի։ Մի քանի ժամերից յետոյ գաղափարը կը քանդէ և հողի մէջից դուրս կը հանէ նոր պատրաստուած մեր ճաշակին համեմատած պատուէրը։ Առնելով ոսկերիչը բերում է ու մեզ հանձնում մեր գործը։ Այժմ խնդրում ենք վարպետին, որ նորից կշռէ նոյն մետաղը։ Մենք կը տեսնենք, որ այն քաշն չի քաշում ինչ որ դրա կտոր, կտոր ժամանակն էր։

Ի՞նչ եղաւ մեր տուած մետաղները ինչու այսքան պակաս պէտք է կշիռէ

կը մտածենք այդ անկասկած։ Արդեօք վարպետն գողացաւ թէ գաղափարում մնաց տաք հեղուկը կամ թափուելով փչացաւ։ Բայց ոչ սիրելի քոյրերս, ոչ վարպետն էր գող և ոչ գաղափարն էր ծակ, սակայն նորա պակասութիւնը այն, է որ մեր տուած մետաղը մաքուր չի եղել, ոսկերիչը հաւաքեց նորա կեղտը ու դէն ձգեց, անկասկած, որ նոյն չափով չի կշռիլ նոր պատրաստուած զարդը, ինչքան որ մեր տուած ոսկին կամ արծաթն է եղել։—Ուրեմն նմանապէս են ուսումը կամ ուսումնարանների ուսուցիչների սովորացրածները։ Երբ ուսանողը վատ է սովորում կամ վարքերը փոխում է, դա նման է այն կեղտոտ մետաղին որն վարպետը հաւաքելով դէն ձգեց։ Ուսումնարանը և դպրոցները նմանւում են յիշեալ գաղափարին որ մէջ բովանդակուեց մեր նոր տուած զարդը։ իսկ ուսուցիչները ոսկերիչին է որը ընդունեցին մեր պատուէրները։ Մաքրելով բո-

լոր ուսանողների վարքերը։

Այդպէս ահա յարգելի քոյրերս. ասաց նա. ուսումնարանը երբէք և իցէ մեղաւոր չէ, թէ Նադեաի արիւնների կամ սրտի խորքերը կեխտով լի է եղել։ Ուսուցիչները առնելով նրան, որ դարձնեն բոլորվին մի ուրիշ զարդ բայց Նադեան ինքը իր կեխտոտ սրտի ոյժը հանձն առնելով, թողեց բաղդաւոր ուսումը ու վազեց դէպի այն կողմը, դեպի այն ձայնը որտեղ իր սիրտն էր ցոյց տալիս, բացի դրանից ուրիշ ոչ կերպ չեր կարող լինել։

Այս խօսքերով միմեայն կարողացաւ երկրորդ դրացուհին մի կերպ համոզացնել մնացած երեք դրացուհիներին թէ ուսումը յանցաւոր չէ այդպիսի մոլորող դէպքերում։ Ուստի տեսնելով թէ իր խօսքերը ինչ տպաւորութիւններ թողեց նրանց վերայ, տեղից վեր կենալով փոքր ինչ ուրախ ձայնով բարի գիշեր մաղթեց, կամենում էր դուրս գնալ սենեակից։ Նոյն օրինակին դիմեցին և մնացած երկու կանայքը։

Ե.

Երկու օր շարունակ Նադեան մնացել էր անյայտացած։ Երրորդ օրը առաւօտեան մի ոստիկան մօտեցաւ այրի կընոջ դռան ու խնդրեց, որ ցոյց տան Նադեաի մօրը։ Այրին տեսնելով ոստիկանին կարծես թէ համրացաւ։ Երկու տեսակ մտքեր նրան յեղափոխեցնում էին։ Նա մերթ մտածում էր, մի գուցէ մի սարսափելի դժբաղդութիւն է պատահել, որ ոստիկանը այսքան վաղ իրան հաղորդելու է եկել իր կորած աղջիկայ մասին։ Մերթ և մտածում էր,—Նադեան կարելի է գտնուել է ու այս մարդը բարի համբաւ է բերել։ Մինչ դեռ այրին այդպիսի մտքերի մէջ ընկղմուած էր ու ապշած նայում էր իւրեան դիմաւորողի երեսին, ոստիկանը խանգարելով նորա լռութիւնը հարցրեց մեղմօրէն։ Դուք էք Սոֆիա Գրիգորեվնան։

—Այո՛, ես եմ. պատասխանեց այրին։

—Ձեզ այսօր ժամի տասն ու մէկին Մ. Քահանան հրաւիրեց իր տունը այնտեղ և լինելու է այս թաղի ոստիկանապետը:

—Բայց քահանան ինչ բանի համար է ինձ հրաւիրում:

—Ինձ դորա մասին ոչինչ յայտնի չէ:

—Սպա ով ողարկեց ձեզ ինձ մօտ:

—Երէկ երեկոյեան ոստիկանապետը ինձ հրամայեց, որ այսօր կանուխ ձեզ յայտնեմ մի և նոյնը:

—Իսկ դուք իմ աղջիկայ մասին ոչինչ չգիտէք:

—Ոչինչ:

—Ես մի քանի օր առաջ յայտնել էի ոստիկանապետին որ իմ աղջիկը անյայտացել է, միթէ դուք դորա մասին ոչինչ չէք լսել:

—Ինչպէս չէ, մեզ հրամայուած է, որ երբ գտնենք նրան անշուշտ պէտք է հանձնենք ոստիկանապետին.

—Գուցէ գտել են նորան:

—Ոչինչ չ'գիտեմ... Ուրեմն այդպէս այսօր անշուշտ կըներկայանաք քահանային, խօսքերին վերջաբանութիւն տալով, ասաց ոստիկանը ու հեռացաւ:

Քահանան, ապրում էր քաղաքի ընդարձակ փողոցների մէկի վերայ: Նորա առանձնասենեակը զարդարուած էր միջին ճաշակով: Պայծառ լուսամուտների առջևում դրած էր մեծ ու ընտիր գրասեղան, որի կանաչ մակերևոյթի վերին կողմը ծածկուած էր բազմաթիւ գրքերով: Սենեակի մի անկիւնում տեղաւորուած էր մի պահարան, որի մէջը կար փառայեղ կազմերով գրքեր: Կար և սենեակում մի մահճակալ որի վրայ տարածուած էին մաքուր անկողին: Սենեակը զուրկ չէր և մի քանի աթոռներից:

Երկու անձնաւորութիւններ նստած էին գրասեղանի առաջ միևնոյն սենեակում, լուռ եղանակով խօսակցում էին իրարու հետ: Դրանցից մէկը հոգևորական քահանայ էր, իսկ միւսը աստիճա-

նաւոր ոստիկան։

—Դուք ինչ խորհուրդ էք տալիս, պարոն ոստիկանապետ այս երկու սիրահարուած երիտասարդների մասին, ասաց քահանան իր խօսակցին։

—Ես, ոչ մի արգելքներ չեմ ունենալ, այդ սիրահարուածների դէմ, պատասխանեց ոստիճանաւորը։—Իսկ նորանք այժմ որտեղ են գտնւում։

—Այստեղ ինձ մօտ են երկուսն էլ։ Երբ նրանք ինձ յայտնեցին իւրեանց դաղտնիքները, ես խնդրեցի, որ երկուսն էլ գիշերեն ինձ մօտ, մինչև ձեզնից համաձայնութիւն ստանամ։

—Ես, այդ գործի դէմ բոլորովին համաձայն եմ տէր հայր, բայց և հրաւիրել եմ օրիորդի մօրը, թող նորան ևս համաձայնեցնենք, որ իր աղջիկը, ամուսնացնում ենք մի լաւ երիտասարդի հետ.

—Աւելի ուրախ եմ, պատասխանեց քահանան։

—Ուր են նրանք, հրաւիրեցէք

ներս. ես ցանկանում եմ տեսնել. ասաց ոստիկանապետը։

Այս խօսքերը լսելով քահանան տեղից վերկացաւ դուրս գնաց միջին դռնով ու անյայտացաւ։ Փոքր ժամանակից յետոյ նա կրկին մտաւ սենեակը երկու երիտասարդների հետ։ Դրանցից մէկը օրիորդ էր, իսկ միւսը հայ երիտասարդ։ Երկուսն խոր գլուխ տալով ոստիկանապետին մնացին կանգնած։

Աստիճանաւորը խնդրեց, որ նստեն երկու նորեկներին ու դառնալով դէպի օրիորդն ու ասաց։

—Դուք էք, միևնոյն ուսանողուհին, որի մասին պատմում էր մեր քահանան։

—Այո, պատասխանեց օրիորդը։

—Իսկ դուք, ինչ նպատակով էք հեռանում ուսումից։

—Որովհետև այլևս ընդունակ չեմ ուսանելու։

—Ինչն է ձեզ խանգարում։

—Բարի ոստիկանապետ, պատասխանեց օրիորդը. ես բոլորը պատմել եմ այս հոգևոր տէրին, թէ ինչու հեռանում եմ ուսումից կամ թէ ինչն է ինձ խանգարում: Սակայն բաւականի յուսով եմ, որ նա ձեզ ևս պատմած կըլինի, իսկ թէ դուք ցանկանում էք, որ ինձանից յատկապէս լսէք միևնոյնը, ես աւելնորդ չէի համարիլ պատմիլ բոլոր նպատակները:

—Խնդրեմ համառօտ պատմեցէք:

—Ես ինչպես մի ուսանողուհի իմ դասերիս մէջ, աւելացաւ աւելի հարկաւոր իմ սրտին, աւելի հետաքրքիր մի սէր: Նոյն սէրն յառաջ ընթաց եղաւ բոլոր ուսումնական դասախօսութիւններից: Սիրահարական գաղտնի դասը աւելի ուժեղ գտնուեցաւ, քան թէ ուսումնականը: Այդ ուժեղ ներգործութիւնը տարածեց իմ մատաղ սրտի վրայ իւր բոլոր կրակօտ գծերը:

Կրակը, իմ սրտի մէջ օրից օր աւելանալով, բոլորովին հեռու խռկեց ուսումնական լսողութիւններս ու ինքը տիրեց իմ խելքիս ու մտքիս վրայ: Այն օրուանից դարձայ ես գերի, այն անխաւար հուրին: Սէրը վարակեց իր բոլոր բացիլներով իմ ամբողջ երակների արիւնը, դարձրեց ինձ անբժշկելի հիւանդ: Հիւանդութիւնս մեծ քանակութեամբ սաստկացաւ և հազիւ թէ կարողանում էի ոտքի կանգնել: Ի՞նչ անեմ, մտածում էի ես. ուսումնարանում ինձ ծոյլ աշակերտուհի են անուանում. որովհետև չ'պատահել մի այնպիսի օր, այդ երկար ամիսների ընթացքում, որ գոնէ մի դասերիցս ընդունակ լինէի, իսկ տանը մայրս է ինձ սարսափելի կերպով ծեծում և ստիպում է որ յառաջադէմ լինեմ: Բայց նա չէր հասկանում, որ ես սիրահարուած եմ: Նոյն սէրը խլել է ինձանից ուսումնարանի բոլոր աշխատասիրութիւններս, ու առել է իր գրաւիչ գիրկը իմ ուշադրութիւններս: Վերջապէս

մոլորուած, խելագարի ձև ստացած, ոչ մի հնար չէի կարողանում գտնել որ մի կերպ գոնէ թեթևացնեմ վշտերս։ Պատմում էի բոլոր սրտիս կսկիծները այս երիտասարդին։ Սա և վշտանում էր իմ պատմութիւններովս ու միշտ սիրտ էր տալիս ինձ ասելով, «Համբերիր Նադեա միմիայն համբերութիւնը կարող է վերջ տալ մեր բոլոր ցաւերին»։ Իսկ ես տակաւին թոյլ արարած լինելով երկար համբերելու ոյժ չունեցայ, պայման դրի սրտիս մէջ, որ հեռանամ ու փախուստ կրեմ իմ հայրական տնից։ Գնամ այնտեղ, որտեղ աւելի թեթևեն ցաւերի թուերը։ Կատարեց իմ խնդիրքը և այս բարի երիտասարդը։ Երկու օր առաջ թողեցի իմ այրի մօրս առանց ուշադրութեան ու վազեցինք երկուսս ահա այս քահանայի տունը, որ վերջ տայ մեր չարչարանքներին։ Արժանապատիւ տէր-հայրը չընդիմացաւ մեր խորհուրդներին յանձնառու եղաւ, որ այս գիշեր ան-

պատճառ ամուսնացնէ մեզ, որ այլևս, ոչ մի լեզու չունենան իրաւունքներ մեզ յանդիմանելու։ Այժմ դուք, մեծապատիւ ոստիկանապետ, ինչարկէ լսեցէք իմ համառօտ պատմածներս, ինչ կարող էք ասել մեր ամուսնութեան մասին, արդեօք թոյլ էք տալիս թէ ոչ, խօսքերը վերջացնելուց յետոյ հարցրեց աստիճանաւորից՝ օրիորդը։

—Իսկ ձեր մայրը, նա ոչինչ չգիտէ ձեր ամուսնութեան մասին։

—Ոչ, ոչ. Աստուած իմ, նա որ գիտենայ...

—Նա շուտով կըգայ այստեղ, ու մենք նրան կըհամոզացնենք։

—Միթէ յայտնել էք նրան. ասաց օրիորդը վախենալով։ Դուք բոլորովին իզուրէք հրաւիրել նրան։ Այստեղ ինձ տեսնելուն պէս, նա իր բոլոր ուշադրութիւնը կըկորցնէ բարկութիւնից։

—Ոչ օրիորդ, այսուհետև նա իրաւունք չի ունենալ, ձեզ վերայ ասաց ոս-

տիկանապետը։

— Նա, բարկացած ժամանակը ոչ մի իրաւունքներ չի հասկանում պատասխանեց Նադեան։

— Մենք նրան կը հասկացնենք, ասաց աստիճանաւորը, ու դարձաւ դէպի հայ, երիտասարդը որը լուռ նստած էր։

— Իսկ դուք պարոն, միևնոյն համաձայն էք օրիորդի ասածներին և սրտով ցանկանում էք ամուսնանալ այս ուսանողուհու հետ։

— Այո՛, բարի՛ աստիկանապետ. ես համաձայնւում եմ, իմ սիրուհուս բոլոր խորհուրդներին և սրտով ու հոգով ցանկանում եմ ամուսնանալ այս ուսանողուհու հետ։

Այսպիսի խօսակցութեան մէջ էին սենեակում. երբ քահանայի աղախինը դուռը բաց անելով ներս մտաւ տանտնասենեակը, խանգարելով նրանց խօսակցութիւնը ասաց։

— Տէր-հայր, մի կին Ձեզ սպասում է։

— Ա՛հա եկաւ նա, ասաց քահանան ու դուրս գնաց դիմաւորելու Նորեկ կընոջը։

Սենեակում տիրեց մեռելային լռութիւն։ Օրիորդը և երիտասարդը վեր ցատկեցին տեղներից ու գնացին դէպի պատի կողմը, կարծես թէ, նրանք կամենում էին մի տեղ. մի անկիւնում անյայտանալ որ իրանց չ'տեսնէ Նորեկ կինը։ Մինչ դեռ նրանք այս ու այն կողմն էին նայում որ հասնեն իւրեանց նպատակներին, երբ յանկարծ քահանան ներս մտաւ միևնոյն դռնով, մի միջահասակ կնոջ հետ։

Նորեկ կինը բարևելով աստիճանաւորին, կամենում էր նստել իրան ցոյց տուած աթոռի վերայ, յանկարծ նկատեց իւր աղջիկան, որը կանգնած էր պատի տակ։ Նա զարմանքից սառաւ, էլ չկարողացաւ նստել, միմիայն մի քանի խօսքեր դուրս թռան նրա բերանից։

— Նադեա՛, աղջիկս այդ որտեղ ես

այս երեք օրը։

Օրիորդը չ՚պատասխանեց այլ լուռ կարմրելով գետնին էր նայում։

Այրին տեսնելով իր աղջիկայ լռութիւնը ու ամօթից կարմրելը, իսկոյն հասկացաւ, որ նա մի գաղտնիք ունի, սակայն բարկանալով կրկնեց։

— Լսիր քեզ եմ ասում. ուր էիր այսքան ժամանակ, մի՞թէ լեզուդ կտրել են, ինչ ես լռել պատասխանիր ինձ.

Օրիորդը դարձեալ լուռ էր, նա երկար չդիմանալով մօրը յանդիմանութիւններին, սկսեց լաց լինել, բայց բոլորովին խուլ եղանակով։ Քահանան և ոստիկանապետը տեսնելով այրի կնոջ բարկութիւնը և օրիորդի դառն արտասուքները, ուստի չ՚դիմացան, այս անվայել վարմունքներին, քահանան միջամտեց և ասաց այրի կնոջը բոլորովին քաղաքավարութեամբ։

— Ներիր մայր, դուք շուտով կ՚իմանաք թէ որտեղ է եղել նա, ինչու իզուր

բարկանում էք։

— Տէր-Հայր, այս օրիորդն իմ աղջիկն է, սա երրորդ օրն է, որ անյայտացել է տնից, բաւականի չարչարվելուց ու ամեն բարեկամից հարց ու փորձ անելուց յետոյ յայտնեցի այս պ. ոստիկանապետին իմ աղջիկայ կորստեան մասին, այսօր ես նրան գտնումեմ այստեղ ձեր տանը, ինչպէս չ՚բարկանամ, պատասխանեց այրին կատաղած աչքերը դարձնելով քահանայի վրայ։

— Համբերեցէք մայր. ամեն բան կ՚պարզուի հիմայ ձեր առաջ, դուք նախ և առաջ ասացէք ձեր օրիորդը քանի տարեկան է։

— Իմ աղջիկը, տասնուվեց տարեկան է։

— Շատ լաւ։

Բայց ինչն էր ձեզ ստիպում իմանալ իմ աղջիկայ տարիքը։

— Սոֆիայ Գրիգորևնա! ասաց քահանան. ձեր աղջիկը բոլորը պատմել է

մեզ իր տնից հեռանալու պատճառը, մենք չենք գտնում քո աղջկայ վարմունքի մէջ մի այնպիսի սխալ, որ կարողանաք մեղադրել նրան։ Այն ինչ որ պահանջում է ձեր օրիորդը, այդ հարցին մենք բոլորս համապատասխան պէտք ենենք, որովհետև, ընդհանուր տչխարհ այդպիսի պահանջները երբէք անուշադիր չեն թողնում։ Ձեր աղջիկը գալով ինձ մօտ պատմել է իր գաղտնի ցաւերը, խոստովանվել է, որ այլևս այն ցաւերը տանելու յատկութիւն չունի։ Այս օրիորդը որը կանգնած է մեր առջև, սա երկու օր առաջ, ծնկաչոք խնդրում էր իր սրտի կսկիծներին և անտանելի վշտերին մի կերպ թեթևութիւն ինձնից։ Գալով օրիորդի դառնութիւնը, խրատեցի նրան, ամեն մի կերպ յոյս տուի, որ անմիջապէս հասցնեմ քո աղջկան իր բարի նպատակին ձեր անկեղծ օրհնութիւններով։

Լսելով օրիորդը իմ խօսքերս

բաւականի մեծ ուրախութեամբ համբուրեց իմ աջս և խնդրեց ապրել իմ տանը մինչև կատարեմ խոստմունքներս։ Ես ուրախութեամբ ընդունեցի, ու հաղորդեցի այս անցքը պ. աստիճանաւոր ոստիկանապետին, որ նա ևս վերահասու լինի սրանց գործերին։ Բարի ոստիկանապետը հրաւիրեց ձեզ, որ ձեր օրհնութեամբ կայանայ այս խորհուրդը։ Բաւականի մեծ յոյս ունենք, որ դուք երբէք ձեր աղջիկայ վատը չէք ցանկալ։

— Ես չեմ հասկանում թէ դուք ինչ էք ուզում ասել և կամ թէ, իմ աղջիկը ինչ խորհուրդի տէր է, դարձեալ չգիտեմ։

— Ինչպէս ասացի ձեր աղջիկը սպասում է ձեր օրհնութեանը, այդ կլինի այն օրհնութիւնը, երբ մայրը ընտրում է իր զաւակի համար մի ընկեր, բռնելով իր սիրելի որդու ձեռքը տալիս է իւր բարեհաճած ընկերոջը ասելով։ գընացէք որդիքս Աստուած ձեր բարին

տայ. և այլը։ Այդ օրէնքները տնօրէն են մեր նախնիքները, հայրապետները հաստատել ու ճշտութեամբ պահել և ամրացրել են։ Մենք ևս պարտական ենք, ամեն մի կերպ, ամենայն սրբութեամբ տարածել այդ սուրբ օրէնքները որի մասին հէնց և ձեզ հրաւիրել ենք։ Կարծեմ ձեզ հիմայ հասկանալի է ձեր աղջիկայ խորհուրդները, այնպէս չէ Սոֆիա Գրիգորևնա։

—Ոչ դեռ ես ոչինչ չ'հասկացայ։

—Ուրեմն լսեցէք այժմ ասեմ, ձեզ ամենասլարզը, շարունակեց քահանան. ձեր աղջիկը, մի քանի ամիս սրանից առաջ տեսնում է մի երիտասարդ։ Երիտասարդները տակաւին համակրում են միմեանց և սիրում։ Սէրը այն աստիճանի մտնում է, այդ երկու անձանց մէջ, որ սրանք մոռանում են ամենայն մի աշխատանքներ։ Օրիորդը ծուլանում է ուսման մէջ, այն նպատակով, որ նա միայն մտածել է սկսում սէրի վրայ։ Նո-

ւա միակ ուսումը միակ ուսումնարանը այն էակն է, որին սիրել է, որի սիրոյ վարակիչ բոցավառութիւնը վարակել էր նրա մարմնոյ բոլոր ջղերը։ Ահա այդպիսով օրից օր աւելի ու աւելի ամրապնդուել է սէրը նրա մէջ և բազմաթիւ արմատներ է արձակել, որն ներկայում քաղաքան անելը բոլորովին անհնարին է։ Այո, իզուրէ ձեր խստութիւնը, այլևս ոչ մի ոյժ չ'ունենալ նրան դէմ։ Մինչևնոյն և մեր մերժումները ոչ մի ազդեցութիւններ չեն ներգործիլ այդ երկու սիրահարուածներին։ Հասկացաք մայրիկ, թէ ինչ խորհուրդների տէր է ձեր աղջիկը։

—Այո, հասկացայ, պատասխանեց այրին, մի խոր հոգոց անելով, ես դեռ նոր հասկացայ որ իմ աղջիկը սիրահարուած է եղել, դեռ նոր եմ իմանում, որ իմ աչքերը բոլորովին փակ են եղել իմ աղջիկայ դէմ։ Ուրեմն, նա ոչ թէ ուսումնարան է գնացել, այլ սիրահարա-

կան շրջանի մէջ է տատանուել այնպէս չէ, համեստ աղջիկս ասաց ու սարսափելի հայացք ձգեց Նադեաի վերայ։

—Ես քիչ առաջ նախագուշացրի, որ այլևս ձեր և մեր խստութիւնները ոյժ չեն ունենալ սրանց դէմ, դուք այդ առաջ պէտքէ մտածէիք։

—Առաջ, ես ինչ կարող էի գիտենալ որ իմ աղջիկը սիրական է գտնում։

—Ոչ, այդ ձեր հոգեկան պարտականութիւնն է, դուք մայր էք, անշուշտ պէտքէր հետաքրքրուած լինէիք ձեր աղջկայ կեանքին։

—Ես հաւատացնում եմ, մեր դրացուհիների մէջ ոչ ոք այնքան խիստ չի վարուում իւր որդկերանց հետ որքան ես սորա։

—Այդ աւելի վատ, ասաց քահանան։

—Մի օր ինձ պատմեցին թէ, Նադեան բաւականի ծուլութիւններ է անում։ Բարկութիւնից այն աստիճանի ծեծեցի, որ երեք օր ուսումնարան չ'կարողացաւ

գնալ։

—Իսկ դուք, այցելեցիք արդեօք ուսումնարան, օրիորդին նախազգուշացնելուց յետոյ ձեր աղջկայ վարքերը կամ սովորիլը տեղականալու։

—Իմ տնային գործերը այնքան շատ են, որ գրեթէ ամբողջ օրը զբաղուած եմ լինում։

—Ուրեմն ձեզ համար որն է աւելի թանկ, տնային գործերը, թէ ձեր երեխայոց ուսումը։

—Ինչպէս ուսումը։

—Այո մայրիկ, ուսումը թանկ է աշխարհում ամեն բանից։ Ծնողը միշտ և ամենայն քայլերում, պէտքէ վերահսկու լինի իր օրիորդի գործերին։ Եթէ այն ժամանակ, դուք այցելած լինէիք ուսումնարան և հետաքրքրուած, թէ ինչ է պատճառը, որ ձեր աղջիկը ծուլութիւն է անում, գուցէ մի բան կը հասկանաիք և առաջն կ'առնէիք։ Մայրական պարտականութիւնն է, որ միշտ խրատէ

իր զաւակներին, իսկ ոչ միայն ծեծելով, մազերից քաշքշելով, այլ խոհեմութեամբ, որ զաւակը կարողանայ իր գաղտնիքները պատմել ծնողներին առանց քաշուելու։ Ձեր աղջիկը պարտաւորուած պէտքէր ուրիշին յայտներ իր ցաւերը և ուրիշներից էլ, մխիթարութիւն ստանար։ Գովում եմ ձեր աղջկան, այն փաստի վերաբերմամբ, որ նա մի ուրիշի մօտ չի գնաց խորհուրդի, այլ ինձ մօտ գալով ծնկաչոք խնդրում էր, որ վերջ տամ այդ սարսափելի կեանքին։ Այժմ ամեն բան անցել է, մենք պէտքէ մտածենք, թէ ինչ միջոցներով բաղդաւորացնենք Նադեային։ Ես կարծում եմ, որ դուք ձեր դստրի դժբաղդութիւնը չէք ցանկալ։

—Ի հարկէ չեմ ցանկալ, բաւականի ուրախ կըլինեմ, որ իմ աղջիկը աւելի փառաւոր բաղդաւորութիւնների տէր լինէր։

—Ուրեմն յանձնեցէք ձեր աղջկայ ձեռը, այս երիտասարդին և օրհնեցէք

սրանց։

—Ոչ, դեռ ես պատրաստ չեմ, այդ օրհնութիւնը, տալու տուէք ինձ իմ աղջկան մինչև, որ ես պատրաստուեմ։

—Սոֆեա Գրիգորևնայ, խօսաց ոստիկանապետը, որը մինչ դեռ լուռ նըստած լսում էր նրանց խօսակցութիւնները,—համաձայնուեցէք քահանայի առաջարկութիւններին, կատարեցէք նրա խնդիրքները։ Մենք ցանկանում ենք, որ այդ ամուսնութիւնը ձեր շնորհիւ լինի, իսկ ինչ որ մնում է, թէ մենք, ձեզ ձեր աղջկան տանք առանց անկատար թողնելու այդ հարցը, բոլորովին անհընարին է։

—Մի թէ դուք իմ աղջիկը ինձնից խլում էք, ասաց այրին արտասուքներ թափելով։

—Ոչ տիկին, սխալւում էք, ես ձեր օրիորդին խլել չեմ կամենում, այլ ձեր աղջկան այսօր, այս երեկոյ, առանց պատճառների պէտքէ ամուսնացնէք, ահա

այն երիտասարդի հետ, որն կանգնած է նրա մօտ։ Դուք կարող էք ձեր պատրաստութիւնները վաղը կամ միւս օրն էլ կատարել, դրանց ամուսնութիւնից յետոյ։ Իսկ ինչ որ մնում է, թէ յետաձգենք այս ամուսնութիւնը, այդ մենք չենք կարող։ Այժմ նայեցէք ձեր յարմարութեանը ինչպէս կամենում էք։

Ոստիկանապետի վերջին սառը խօսքերը, այն աստիճանի ազդեցին այրի կընոջը, որ նա հեկեկալով առանց ոչ մի պատասխանի դուրս գնաց քահանայի առանձնասենեակից, սրբելով աչքերի արտասունքները։ Քահանան յետևից նրան հարցնելով, երբ նա կամենում էր սանդուխներից վայր իջնել։

—Ոչինչ չունէք ասելու։

—Տէրն իրանց հետ, թող ննց կուզեն այնպէս և ապրեն. ես չեմ ցանկանում, որ իմ աչքը տեսնէ դրանց անժամանակ ամուսնութիւնը։ Ասաց Սոֆեա Գրիգորևնան ու հեռացաւ։

Զ.

Լուսինը պարզ լուսաւորում էր երկնքից։ Նրա կաթնանման արտայայտութիւնը, բերկրացնում էր քաղաքի բնակիչների սրտերը։ Ցերեկուայ արևի այրող ճառագայթներից ազատուել էր բընութիւնը։

Մարդիք, թարմ օդ ծծելու համար զբօսնում էին ծովի ափերում կամ քաղաքական այգում։ Սոֆեա Գրիգորևնան դրացուհիները ևս նստոտել էին սրահի մեծ դռան առաջ, պարզ ու սիրուն լուսնեակի հովանաւորութեան ներքոյ։

—Այս գիշեր Ս. Գրիգորևնան հիւրասիրելու է իւր աղջկան ու փեսային, խօսաց դրացուհիներից մէկը, խանգարելով միւսների լռութիւնները։

—Երևի հասկացել է իր սխալները և մեղանչելով հաշտուել է նրանց հետ, պատասխանեց երկրորդը։

—Բայց ինչով է սխալ մայրը, խո-

սաց երրորդը։

—Այո մեղաւորը նա է, որ իր աղ-
ջիկը թողեց ուսումը, ասաց երկրորդ
դրացուհին։

—Բայց չէ որ մայրը սարսափելի
խիստ կին է։

—Այդ հարց չէ, որ ծեծում էր իր
աղջկան և բոլորին յայտնում էր աղ-
ջկայ սխալները։ Մայրը միշտ պէտք
հսկէ իւր աղջկայ վերայ, ոչ թէ խըս-
տութեամբ, ծեծելով ու զանազան տե-
սակ հայհոյանքներ տալով, այլ խոհե-
մութեամբ ու պարկեշտութեամբ պէտ-
քէ կեանք ունենայ իր մատաղ ժառան-
գների հետ։ Նագեաին դիւր էր եկել
միևնոյն երիտասարդը, բայց նա իհարկէ
չ՝որոշեց թողնել ուսումը այլ ձեռք բե-
րել ամուսնութիւնը։ Ոչ, նա սկզբում
համակրել է երիտասարդին, յետոյ փոքր
առ փոքր աւելացել է այդ համակրու-
թիւնները և գոյացել է մի անտանելի
սէր։ Նագեան կարող էր թքել ու հե-

ռանալ այդ համակրութիւններից, եթէ
նրա մայրը, լինէր համբերող և խոհե-
մութեան տէր։ Այլին չափազանց բա-
րոյականութիւն սիրող կին է, առաւել
կասկածաւոր։ Բարոյականութիւնը պաշ-
տպանելու համար, նա այդպէս սաստում
էր իր ուսանող երիտասարդ աղջկան, որ
ամեն մի կերպ պատիւ ու համեստու-
թիւն պահպանէ։ Բայց այդ խեղճ կինը
չ՝գիտէր թէ սաստելով կամ ծեծելով ա-
ւելի ու աւելի իր դստրի աչքերը գող
կը դարձնէր։ Նագեան իւր աչքերը դար-
ձրեց այս ու այն կողմը, որ գտնէ մէկը,
պատմէ նրան իր ցաւերը, իր հարազատ
մօր անվայել վարվողութիւնները։ Նա
շրջեց աչքերը և յաջողուեց նրան. գտաւ
մի գեղեցիկ երիտասարդ ու ամեն մի
կերպ ջանք դրաւ ու աշխատեց, որ բո-
լորովին գրաւէ միևնոյն սիրտը։ Երիտա-
սարդը լսում ու տեսնում էր իր սիրու-
հու գանգատները ու յաճախակի արտա-
սուքները։ Նա աւելի դրանով ամրաց-

նում էր ու հիմնաւորում այդ սէրուութեան արմատը։ Բայց ոչ, սիրելի դրացուհիներս, այդ չէ մայրական պարտականութիւնները։ Մայրը որքան, որ խիստ է, մի քանի անգամ աւել, պէտք է ներողամիտ լինի։ Իւրաքանչիւր մայրը պէտք է հասկանայ, որ ծեծելով ու հայհոյելով երբէք չեն կարող ուղղել իւրեանց զաւակների սխալները։ Օրինակ ունիք ուսանող պատանիներ և երիտասարդներ, եթէ նորանք չեն սովորում իրանց պատուիրած դասերը, դուք չը պէտք է ծեծելով հրամայէք նրանց, որ կատարեն իրանց պարտքերը, այլ որքան կարելի է համեստութեամբ և խրատներով պէտք է վարուէք այդ կակուղ մոմերի հետ։ Երբ դուք այդպիսի վարուղութիւններ կունենաք ու կը հասկացնէք ձեր ժառանգներին թէ ինչ է նշանակում ջանասիրութիւնը և աշխատասիրութիւնը, թէ ինչպիսի պարզ ու աքանչելի տպաւորութիւնները կը թողնեն ծնողնե-

րի վերայ, երբ տարուայ վերջերում կը ստանան ուսուցիչներից գոհութիւններ ու կը տեղափոխուեն բարձր դասարաններ։ Չ'պէտք է ձանձրանալ երեխայից, եթէ նա միանգամից չի սովորում ձեր ասածները. պէտք է ասել մէկ, երկու և տասնեակներ մինչև որ կարողանաք երեխայի խելքի մէջ մտցնել ամուր ձեր ասածները և ձեր դիտաւորութիւնները։

Պէտք է անմիջապէս ըմբռնեցնել երեխայի ուղեղի մէջ, թէ ինչ է նշանակում. կամ ինչ ապագաներ ունին ծուլութիւնները։ Սակայն երբ երեխան հասկանում է և միշտ իր ծնողներից լսում է միևնոյն բառերը, աշխատասիրութեան և ծուլութեան մասին, այն ժամանակ այդ փոքրիկների խելքի և ուղեղի մէջ մտնում է մի մեծ և չափազանց արմատներով առաքինութիւն։ Առաքինութիւնը կանաչում է ու սկսում է ծաղկել անոյշ հոտ տարածել և ճիւղերը արձակել։ Այդպիսով երեխան մեծանում

է առաքինութեան հետ միասին ու ապագայում դառնում է առաքինի երիտասարդ։ Այո՛, պէտք է հաստատ իմանալ, որ ուսանողներին այնքան չեն ազդում ուսումնարանի ուսուցիչները, որքան, որ հարազատ մայրերը։ Մայրն է երեխայոց բաղդն ու թշուառութիւնը։ Բայց ինչպիսի մայր, մի այնպիսին, որ կատարեալ մայրութիւն գիտէ, դա և կախուած է դարձեալ ուսումից ու կրթութիւնից։ Եթէ Նադեաի մայրն էլ կրթուած լինէր ուսուման մէջ, նա երբէք չէր տեսնիլ իր սիրուն աղջկան թերի թողած լոյս ճանապարհ, ընդունած խաւարը կամ ամուսնութեան տանջեցնող կեանքը։ Ամուսնութիւնը միշտ ձեռք բերել կարող էր, իսկ ուսումը որն երկու տարուց յետոյ պէտք է աւարտեր, և ո՞վ գիտէ, թէ ինչ հրաշալի պատուի տէր կը դառնար նա, այլևս աւա՜ղ։ Ահա իմ կարծիքներս, յարգելի քոյրեր։

—Ահա գալիս են, ասաց դրացու-

հիներից մէկը, կտրելով երկրորդի խօսքերը։

Դրացուհիներն բոլորն նայեց այն կողմը որտեղից երևում էին Նադեան և իր ամուսինը։

Երկրորդ կինը տեղից վերկենալով բարի գիշեր մաղթեց մնացեալներին կամենում էր հեռանալ։ Մնացած երեք դրացուհիները խնդրեցին երկրորդից, որ դեռ փոքր ինչ ևս շարունակէ իր խօսակցութիւնը։

—Ոչ այլևս չեմ կամենում այստեղ նստել, ասաց ու հեռացաւ։

—Զորս ամսուայ ամուսնացած աղջիկը դեռ նոր է այցելում իր մօրը, խօսաց կանայքից մէկը, նորեկների անյայտանալուց յետոյ։

Լսելով, որ Նադեան բաւականի ափսոսել է իր ազատ ուսումը, ասաց մի ուրիշը։

—Այսուհետև որքան որ կուզէ թող ափսոսէ պատասխանեց երրորդը։

—Ահա մի անմիտ աղջիկ, որը թողեց այն սքանչելի իմաստութեան, իսկական աղբիւրը ու վազեց ընկաւ ամուսնութեան գիրկը։ Վերջաբանութիւն տալով բոլորի խօսքերին, ասաց ու հեռացաւ չորրորդ դրացուհին սրահի դռնից։ Ոպէական լռութիւններից յետոյ, հեռացան և մնացեալ երկու կանայքը։

Վ Ե Ր Ջ.

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀՍՍՀ-ՍՍՀՄ
Մ. Մեսրոպյան անվան

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Յարգելի ընթերցողների ներողամտութիւնն եմ հայցում գրքոյկիս մէջ պատահող մի քանի տպագրական սխալների համար, 'ի նկատի ունենալով գործի անփորձութիւնը։

Պ. Ղ. Թ.

ՀՀ Ազգային գրադարան
NL0339942

31924